AZG NEW PDF.qxd 25/08/2010 22:01 Page 1

Azg Ազգ

26 ՕԳՈՍՏՈՍ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 153 (4533)

ISSN: 1829-1651

Եկեղեցում մատուցված պատարագն անգամ դիտարկվում է որպես Թուրքիայի մասնատման սպառնալիք

Դա հիվանդոս երեւակայության հետեւանքն է՝ պայմանավորված թուրք ազգայնամոլների հանցագործի հոգեբանությամբ

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Սեպտեմբերի 19-ին Վանա լճի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցին տարվա մեջ մեկ օրով մի քանի ժամ կբացվի ժամերգության համար, որպեսզի այնտեղ 95 տարվա ընդմիջումից հետո մատուցվի պատարագ: Նշենք, որ 10-րդ դարում կառուցված այս փառաշուք եկեղեցին փակվել է 1915-ի Հայոց ցեղասպանության օրերին, ապա ենթարկվել ավերածությունների, 2007-ի վերականգնումից հետո սկսել է գործել որպես թանգարան:

Մոտավորապես նույն ճակատագրին է արժանացել ավելի քան 1700-ամյա պատմություն ունեցող Պանագիայի հույն ուղղափառ Սումելա վանքը, որը 1922-ին փակվել, իսկ վերջին շրջանում վերածվել էր թանգարանի: Օգոստոսի 15-ին, 88 տարի հետո Սումելա վանքում վարչապետ Էրդողանի կառավարության թույլտվությամբ պատարագ մատուցվեց՝ հանդիսապետության Կ. Պոլսո հունաց տիեզերական պատրիարք Բարդուղիմեոսի: Սումելայի սուրբ պատարագին մասնակցելու էին եկել բազմաթիվ ուղղափառներ Հունաստանից, Ռուսաստանից, Վրաստանից եւ ԱՄՆ-ից:

Տես էջ 8

Ռուսաստանն այլեւս վտանգ չէ Թուրքիայի համար

Թուրքիան Ռուսաստանի անունը կհանի իր ազգային անվտանգությանը սպառնացող երկրների ցանկից, հաղորդում է Today's Zaman թերթը՝ վկայակոչելով սեփական աղբյուրներ:

Ազգային անվտանգության խորհրդի կազմած թշնամական երկրների ցանկում Ռուսաստանը հայտնվել էր դեռ խորհրդային տարիներին. թուրքերը պնդում էին, թե ՊԿԿ-ի ֆուրդ ապստամբները զենքի մեծ մասը ստանում են Մոսկվայից:

Սակայն, նշում է թերթը, վերջին տարիներին Ռուսաստանն ու Թուրքիան բարելավել են դիվանագիտական հարաբերությունները, ինչպես նաեւ համագործակցություն են ծավալել առեւտրի եւ էներգետիկայի ոլորտներում: Բացի դրանից, ՌԴ արտաքին հետախուզությունը եւ թուրքական MIT ազգային հետախուզությունը համատեղ ջանում են պահպանել էներգամատակարարումների անվտանգությունը: «Գազպրոմը» նախնական համաձայնագիր է ստորագրել Թուրքիայի ափամերձ ջրերում «Հարավային հոսք» գազամուղի կառուցման վերաբերյալ:

Հոկտեմբերին պատրաստ կլինի Թուրքիայի ազգային անվտանգության նոր ռազմավարությունը, որը կարեւորության պատճառով երբեմն անվանում են երկրի գաղտնի սահմանադրություն: Ռազմավարությունը վերանայվում է 5 տարին մեկ: Երեկ «**Ազգը**» գրեց, որ Թուրքիայի կառավարությունը որոշել է երկրի անվտանգությանը սպառնացող պետությունների ցանկից հանել նաեւ Իրանի եւ Հունաստանի անունը:

ԲՈԲԻԿԱՆՈՒՄ ԵՆ՝ ՁՈՒՐ ՉՈՏԱՊ

Ադրբեջանում վախենում են հայ-թուրքական սահմանի բացումից, բայց պայմաններ են թելադրում Ռուսաստանին

Ա.ՏԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավանականությունը, թե հայ-թուրքական սահմանը ՆԱՏՕ-ի զորավարժությունների ժամանակ մի քանի օրով կբացեն ու հետո էլ ամենայն հավանականությամբ կփակեն մի ոչ կարճ ժամանակով, ավելի մեծանում է, հատկապես որ անհանգստության ու անհարմարության ակնհայտ դրսեւորումներ են նկատվում Ադրբեջանում:

Այս երկու երեւույթների ուղղակի կապը պայմանավորված է ոչ միայն Ադրբեջան-Թուրքիա հարաբերությունների առնչությամբ ամենաբարձր տոնայնությունների հայտարարություններով, այլեւ «մեկ ազգ, երկու պետություն» հեյդարալիեւյան ուղերձի ոչ ամբողջական, երբեմն խնդրահարույց դրսեւորումներով:

Ամեն դեպքում, Ադրբեջանի նախագահի նստավայրից, «Թրենդ» գործակալության տեղեկացմամբ, հայտարարել են, թե հայ-թուրքական սահմանի բացումը «չի բխում ինչպես Թուրքիայի, այնպես էլ Ադրբեջանի շահերից»: Ադրբեջանի արտաքին գերատեսչության ներկայացուցիչներից առավել հաճախ տարբեր բնույթի հարցեր մեկնաբանող, իսկ ավելի ճիշտ՝ պրոպագանդող Ալի Հասանովը, որ ղեկավարում է Ադրբեջանի նախագահի աշխատակազմի հասարակական-քաղաքական հարցերով բաժինը, մասնավորապես նշել է, թե սահմանի բացումը կարող է՝ «բերել նրան, որ Հայաստանը կշարունակի ոչ կառուցողական դիրքորոշում ցուցաբերել ղարաբաղյան հարցի բանակցություններում»:

Թուրքիայում սահմանի բացման հավանական որոշմանը մեծագույն մտահոգությամբ հետեւող Ադրբեջանը, ըստ Հասանովի, իր դժգոհությունը որպես դիրքորոշում ներկայացրել է Թուրքիայի նախագահին եւ վարչապետին:

Տես էջ 3

ԲՈՍՏՈՆ

«Հայկական ժառանգության այգու» բացումը՝ սեպտեմբերի 9-ին

«Հայկական ժառանգություն հիմնադրամը» ուրախությամբ տեղեկացնում է, որ «Հայկական ժառանգության այգու» հանդիսավոր բացումը տեղի է ունենալու սեպտեմբերի 9-ին, ժամը 14-15, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի, Մասաչուսեթսի կառավարչի եւ Բոստոնի քաղաքագլխի ներկայությամբ:

«Հայկական ժառանգության այգին» գտնվելու է «Ռոզ Ֆիցջերալդ Քենեդու» անվան մարգագետնի 13-րդ հողաշերտում, եւ հավերժացնելու է հիշատակը 1915 թվի Եղեռնի անմեղ զոհերի, միաժամանակ հարգանքի տուրք մատուցելով բոլոր նրանց, ովքեր Մ. Նահանգների Մասաչուսեթս նահանգը ժամանելով իրենց արժանապատվորեն դրսեւորեցին ինչպես գիտությունների, արվեստների, այնպես էլ կրթական, հասարակական ծառայությունների եւ առեւտրի բնագավառներում: Դա որոշ առումով ամերիկահայերի երախտագիտության եզակի արտահայտությունն է լինելու ընդհանրապես համագործակցության երկրների ժողովուրդներին եւ մասնավորապես Բոստոն քաղաքի բնակիչներին:

Հ. Ծ.

Ստամբուլի իշխանությունները չեղյալ են հայտարարել Ջիվան Գասպարյանի համերգը

Սեպտեմբերի 1-ին՝ խաղաղության միջազգային օրը նախատեսված թուրք երգիչ Յավուզ Բինգյոլի եւ աշխարհահռչակ դուդուկահար Ջիվան Գասպարյանի համատեղ համերգը չի կայանա: Երեկ Ստամբուլի իշխանություններն առանց որեւէ բացատրության չեղյալ են հայտարարել համերգը: Նշենք, որ համերգին մասնակցելու հրավեր դուդակահարը ստացել էր ամիսներ առաջ:

Թե ինչո՞ւ են անսպասելիորեն իշխանությունները համերգը չեղյալ հայտարարել, դուդուկահարը որեւէ բացատրություն չունի: «Գաղափար չունեմ ու որեւէ տեղեկություն էլ չունեմ, թե ինչու համերգը չի կայանալու: Յավուզ Բինգյոլն արդեն քննադատել է թուրքական իշխանություններին: Նա զարմացել է, որ համերգը չի կայանալու, եւ Ստամբուլի իշխանություններին հայտարարել է, որ սա անարգանք էր նման լեգենդար դուդուկահարի նկատմամբ, ինչպիսին է Ջիվան Գասպարյանը: Կարծում եմ՝ սա բավական է, եւ ավելացնելու ոչինչ չկա», «**Ազգ**»-ի հետ հեռախոսազրույցում ասաց դուդուկահարը:

Նա ընդգծեց, որ սա առաջին անգամը չէ, երբ հայ ու թուրք երաժիշտները միասին համերգ են տալիս Ստամբուլում, սակայն առաջին դեպքն է, երբ թուրքական իշխանությունները նման վերաբերմունք են ցուցաբերում եւ առանց պատճառի ու բացատրության համերգը չեղյալ հայտարարում:

Հ. Հ.

Մրցանակ՝ Շառլ Ազնավուրին

Շառլ Ազնավուրին շնորհվել է Ռուսական մշակույթի փառատոնի բարձրագույն մրցանակը: Ֆրանսիական շանսոնի լեգենդար վարպետը արժանացել է մրցանակի «Ռուսաստանի եւ Ֆրանսիայի միջեւ մշակութային կապերի ամրապնդման համար»: Հանդիսավոր արարողությունը տեղի է ունեցել Կաննի Փառատոնների եւ համագումարների պալատում՝ «Ռուսական գիշերվա» ընթացքում:

Փրկե՛նք շնիկին

1,5 տարեկան Շոկոլադկան մի քանի օրից կմնա անտեր ու մենակ, եթե ոչ մեկը չօգնի նրան: Շոկոլադկան նկարի շնիկն է: Այն կինը, որը պահում է շնիկին, օգոստոսի 30-ին մեկնելու է Հայաստանից, իսկ շնիկը մնալու է փողոցում՝ անտեր: Առանց այն էլ ինչ-որ ժամանակ շնիկը փողոցում է աորել:

Շոկոլադկան էգ շնիկ է, ստերիլիզացված է եւ ձագեր չի ունենա: Նա շատ մարդամոտ է, հավատարիմ ու անպատճառան: Օգնե՛նք Շոկոլադկային եւ թույլ չտանք, որ փողոցային շների թիվը եւս մեկով ավելանա:

Ովքեր ուզում են օգնել շնիկին, կարող են զանգահարել Նուսեին 091 - 412459 հեռախոսահամարով:

Շուտով կօծվի Բրբենքի նորակերտ մայր եկեղեցին

Հայաստանյայց եկեղեցու Արեւմտյան թեմից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ առաջիկա սեպտեմբերի 11-ին հանդիսավոր պայմաններում օծվելու է Բրբենքի (Կալիֆոռնիա, ԱՄՆ) առաջնորդանիստ նոր եկեղեցին, ձեռամբ Ամենայն հայոց հայրապետի: Պետական, ազգային եւ եկեղեցական բարձրաստիճան ներկայացուցիչների ներկայությամբ եւ մասնակցությամբ տեղի ունենալիք օծման արարողությանը հաջորդելու է մեկ այլ օծում՝ այս անգամ նոր խաչքարի, որը նվիրվել ու ճիշտ 9 տարի առաջ նույն օրը՝ 2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում պատահած ահաբեկչական արարքին զոհ գնացածների հիշատակին: Իսկ հաջորդ օրը, սեպտեմբերի 12-ին նորաօծ մայր եկեղեցում մատուցվելու է Ս. պատարագ՝ Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից, որից հետո «Հիլթոն» հյուրանոցում տրվելու է պատշտոնական գալա-ճաշկերույթ: Ըստ հաղորդագրության, արարողություններին մասնակցելու են նաեւ Անթիլիասի կաթողիկոսության ներկայացուցիչներ:



AZG NEW PDF.qxd 25/08/2010 22:17 Page 1

Մարտունու ոստիկանությունն ահաբեկում է, իսկ դասախազությունը հեռատեսություն է Վերին Գեսաշենի բնակիչներին

Երեկ Վերին Գեսաշենի բնակիչներին կանչել էին Մարտունու դասախազություն՝ ցուցմունք տալու համար: Կանչը կատարվել է տարօրինակ պայմաններում՝ ներին կարգով Վերին Գեսաշենի գյուղապետ Ռուբիկ Ղուկասյանի միջոցով, առանց պաշտոնական ծանուցագրի ներկայացման, որտեղ նշված կլիներին քննչական գործողությունների անցկացման պատճառները:

«Էկոլուրի» փոխանցմամբ՝ դասախազությունը կազմել է 15 մարդուց բաղկացած ցուցակ, ովքեր պետք է անհապաղ հարցաքննվեն: Գյուղացիների անունների ընտրությունը պատահական չէ: Ցուցակում հուլիսի 19-ի բողոքի ակցիայի մասնակիցների անուններն են, որոնք 4 ժամ շարունակ փակել էին Երեւան-Մարտունի մայրուղին՝ իշխանությունների ու հասարակության ուշադրությունը հրավիրելով Արգիճ գետի Գայլաձորի վսակի հունի փոփոխման խնդրին:

Պարզվել էր, որ վսակի վրա աղօրինի հէկ են կառուցում Գայլաձորի հունը Վայոց ձոր տեղափոխելու համար: Այդ ժամանակ Գեղարքունիքի մարզում շինարարական աշխատանքներն արդեն ավարտվել էին: Մարտունու 5 համայնքի շուրջ 30.000 բնակիչ կմնար առանց ջրի: Բացի գյուղացիների խնդրից, գետի հունի տեղափոխումը լուրջ բնապահպանական խնդիր էր եւ հսկայական վնաս կարող էր հասցնել Սեւանա լճին ու կենսաբազմազանությանը: Գայլաձորը Սեւանա լիճ թափվող ամենառաս, խաղցրահամ եւ մաքուր վսակն է, որտեղ հիմնականում բազմազանում են ձկները: Ի դեպ խոսակցություններ էին շրջանառվում, որ հունի փոփոխումը իրականացվում է ոչ միայն հէկ կառուցելու, այլեւ ջուրը շշալցնելու եւ վաճառելու համար:

Շուրջ երկու ամիս տեւած բանակցությունների արդյունքում որոշիչ եղավ ՀՀ նախագահին առընթեր Սեւանի հիմնախնդիրների հանձնաժողովի ձայնը, որն էլ որոշում կայացրեց ոչ թե հօգուտ բնապահպանության նախարարության, այլ՝ բնակիչների (թեմային «Ազգ» օրաթերթն անդրադարձել է բազմիցս-Հ.Հ.): Մտավախությունը, որ սա ընդամենը ժամանակավոր լուծում է՝ ավելորդ աղմուկից խուսափելու եւ բորբոքված կրքերը հանգստացնելու համար, չափազանցություն չէ:

Դեռեւս հայտնի չէ եւ որոշում էլ չկա գետի վրա կառուցված ամբարտակների ու Գայլաձորի հունի հեռացման համար անցկացված 2 կմ խրամուղին ապամոնտաժելու ուղղությամբ: Թե ինչ պատիժ է կրելու «Զանգեզուր Էխսիմդ» ընկերությունը, որն անօրինական շինարարության միակ ու գլխավոր պատասխանատուն է, նույնպես հայտնի չէ: Նրանց գտնելու եւ հարցաքննելու փոխարեն դատախազություն են կանչում գյուղի բնակիչներին, որոնք ուղղակի պայքարել են ու պաշտպանել իրենց իրավունքները:

Գյուղացիների անօրինական հետաքրքիր Սեւանի հիմնախնդիրների հանձնաժողովի ձայնը, որն էլ որոշում կայացրեց ոչ թե հօգուտ բնապահպանության նախարարության, այլ՝ բնակիչների (թեմային «Ազգ» օրաթերթն անդրադարձել է բազմիցս-Հ.Հ.): Մտավախությունը, որ սա ընդամենը ժամանակավոր լուծում է՝ ավելորդ աղմուկից խուսափելու եւ բորբոքված կրքերը հանգստացնելու համար, չափազանցություն չէ:

Դեռեւս հայտնի չէ եւ որոշում էլ չկա գետի վրա կառուցված ամբարտակների ու Գայլաձորի հունի հեռացման համար անցկացված 2 կմ խրամուղին ապամոնտաժելու ուղղությամբ: Թե ինչ պատիժ է կրելու «Զանգեզուր Էխսիմդ» ընկերությունը, որն անօրինական շինարարության միակ ու գլխավոր պատասխանատուն է, նույնպես հայտնի չէ: Նրանց գտնելու եւ հարցաքննելու փոխարեն դատախազություն են կանչում գյուղի բնակիչներին, որոնք ուղղակի պայքարել են ու պաշտպանել իրենց իրավունքները:

Գյուղացիների անօրինական հետաքրքիր տարընդումը սկսվել է երկու շաբաթ առաջ, երբ Մարտունու ոստիկանության քննիչ Հուսիկ Բաղդասարյանը տեղի բնակիչներին հարցաքննել է, թե ովքեր են կանգնած եղել բողոքի ակցիայի կազմակերպման հետեւում, իսկ երեկ գյուղացիներին արդեն հարցաքննել է դատախազության քննիչ Արթուր Մանուկյանը:

Փաստորեն, եթե փորձում ես խնդրի մասին բարձրաձայնել, պաշտպանել քո իրավունքները, պետական կառույցներից պետք է սպասես ոչ թե օժանդակություն, այլ հետապնդում ու ահաբեկում: Այն տպավորությունն է, որ անօրինական հէկ կառուցողներն ու Գայլաձորի խաղցրահամ ջուրը շշալցնել ցանկացողները փորձում են պաշտպանել գյուղացիներին, որովհետեւ այս անգամ չկարողացան գյուղացիների ապրուստի հաշվին հարուստանալ: Իսկ դատախազությունն եւ ոստիկանությունն էլ մի քանի օր շարունակ Վերին Գեսաշենում անառողջ մթնոլորտ ստեղծելով կարծես կատարում են անհայտ օլիգարխների հրահանգը:

ՀԱՄՍԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խաբեություն «Յուվենտուս» եւ «Բարսելոնա» անվանումներով

Ամառվա հետ ավարտին է մոտենում նաեւ պաղպաղակի սեզոնը: Անկախ այն փաստից, որ սեզոնն ուշ սկսվեց, ամենայն հավանականությամբ, այս բիզնեսը, ինչպես յուրաքանչյուր տարի, այս տարին էլ փակեց բարձր շահութաբերությամբ: Շահութաբերություն, որի գերակշիռ մասը շարունակում է մնալ սեզոնային: Հիշեցնենք, որ երկու տարի առաջ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովը հրապարակեց պաղպաղակ արտադրողների տրամադրած տեղեկությունների հիման վրա ստացված եզրակացությունը, համաձայն որի՝ Հայաստանի մեկ բնակչին բաժին է ընկնում... տարեկան ընդամենը 400 գրամ պաղպաղակ: Ինչեւէ: Այս անգամ, սակայն, պաղպաղակի թեմային անդրադառնում ենք մեկ այլ առիթով:

Բնական է, որ որեւէ ընկերություն իր արտադրանքը կամ ծառայությունը սպառողների համար առավել գրավիչ դարձնելու համար զանազան ակցիաներ է իրականացնում: Դրանից զերծ չեն մնում նաեւ պաղպաղակ արտադրողները: Մասնավորապես, նման ակցիա է անցկացնում «ԱՍԱ» ընկերությունն իր արտադրած «Յուվենտուս», «Բարսելոնա» եւ «Ռեալ» հանրահայտ ֆուտբոլային թիմերի անվանումներով էսկիմոներով, որոնցում տեղադրվում են այդ թիմերի խաղացողների լուսանկարները: Ըստ այդ ակցիայի, եթե որեւէ մեկին հաջողվի հավաքել այդ թիմերի 11 խաղացողների լուսանկարները, ապա նա, ընկերության հավաստմամբ, կստանա նվեր՝ մարզաշապիկ կամ գնդակ:

Դժվար չէ պատկերացնել, թե այս նախաձեռնությունը ինչպես է մղում մանկահասակ տղաներին անպայման գնել այս կամ այն թիմի անվանմամբ պաղպաղակը եւ ստանալ նվեր: Նրանց համար կարեւոր էլ չէ, թե քանի նման գնդակ կամ մարզաշապիկ իրենք ունեն, նվեր ստանալը հաճելի անակնկալ է բոլորի եւ առավել եւս երեխաների համար: Ընտրելով թիմերից մեկը, նրանք սկսում են ամեն օր գնել «Ա-ՍԱ»-ի վերոնշյալ պաղպաղակները, խնամքով հավաքել նրանց մեջ եղած ֆուտբոլիստների նկարները եւ անհամբերությամբ սպասել հաջորդ պաղպաղակին: Սկզբնական շրջանում ոգեւորությունը թույլ չի տալիս պաղպաղակ գնող տղաներին եւ նրանց խնդրանքով նաեւ ընտանիքի մյուս անդամներին հիասթափվել անընդհատ կրկնվող ֆուտբոլիստների նկարներից: Երբ մեկ ամսում պաղպաղակներից դուրս եկած 80-90 ֆուտբոլիստների լուսանկարներից մեկ թիմը չի ամբողջանում, դեռ ոչինչ: Հաջորդ ամսին դրան ավելանում է եւս այդքան լուսանկար եւ դարձյալ կրկնվող: Իսկ երբ ամռան վերջին նկարների թիվը հասնում է 240-250-ի, եւ տվյալ թիմի 2 ֆուտբոլիստի լուսանկար, այնուամենայնիվ, բացակայում է, կարելի է ենթադրել, թե ինչ դառը հիասթափություն են ապրում երեխաները, ինչպես են իրենց խաբված զգում:

Իհարկե, յուրաքանչյուրը չի կարող շահել, բայց հասկանալի է, որ խոսքն այս դեպքում ակնհայտ խաբեության մասին է եւ թիմի մեկ կամ երկու ֆուտբոլիստի նկար երբեք էլ չի դրվում պաղպաղակի տուփի մեջ: Այլապես մի՞թե 200-250 լուսանկարներից թիմի 11 խաղացողները չէին ամբողջանա: «ԱՍԱ»-ի ղեկավարները պիտի հասկանային, որ մարզաշապիկը կամ գնդակն այնքան էլ թանկ ապրանքներ չեն, եւ երեխաներին խաբել նման մանրուքների համար՝ առնվազն բարոյական չէ: Եվ ամենակարեւորը, որ նույն երեխաները հաջորդ տարի արդեն նրանց հայտարարած ոչ մի ակցիայի չեն հավատա եւ նրանց պաղպաղակները չեն գնի:

Ինչ վերաբերում է պետությանը, ապա հայտնի չէ անգամ, թե նման դեպքերում ո՞ր մարմինն է իրավասու հսկելու վիճակախաղ հիշեցնող նման ակցիաները: Համենայն դեպս, դա պետք է լինի կամ Երեւանի խաղաքաղաքացիական առեւտրի եւ սպասարկումների վարչությունը, կամ էկոնոմիկայի նախարարության որակի տեսչությունը: Սակայն պարզ է, որ երբ պատասխանատվության հարց է առաջանում, պետական մարմինները անմիջապես այն բարդում են մեկը մյուսի վրա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՓԱԽՍՏԱԿԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՎ

Վեհափառն ընդունել է Դամբյու Դեսալեյնին

Ամենայն հայոց կաթողիկոսն այսօր ընդունել է Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի ներկայացուցիչ Դամբյու Դեսալեյնին:

Ողջունելով պրն Դեսալեյնի այցն հայոց հոգեւոր կենտրոն Մայր աթոռ Սուրբ Էջմիածին՝ Նորին սրբությունը հաջողություն է մաղթել նրա աստվածահաճո եւ մարդասիրական առաքելությանը: Վեհափառ հայրապետը նաեւ գոհունակություն է հայտնել ՄԱԿ-ի գրասենյակի եւ Մայր աթոռի միջեւ ձեւավորված համագործակցության համար, որի շնորհիվ համատեղ իրականացվել են բնապահպանական մի շարք ծրագրեր:

Մասնավոր անդրադարձ է կատարվել փախստականների խնդիրներին: Ամենայն հայոց կաթողիկոսը գնահատանք է հայտնել այն զորակցության համար, որ ՄԱԿ-ի փախստականների հարցերով ներկայացուցչությունը ցուցաբերում է փախստականների ընտանիքներին: Հանդիպմանը Վեհափառ հայրապետը պրն Դեսալեյնին ներկայացրել է Հայոց եկեղեցու առաքելությունը հայ ժողովրդի կյանքում, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, ինչպես նաեւ եկեղեցու ներկայիս բազմակողմ գործունեությունը սոցիալական ոլորտում:

Արձագանք խաղաքաղաքացուց

Հարգելի խմբագրություն

Ձեր օրաթերթի օգոստոսի 25-ի համարում լույս տեսած Կոմիտասի 5ա շենքի վերաբերյալ հոդվածի առնչությամբ հարկ ենք համարում տեղեկացնել, որ Երեւանի խաղաքաղաքացի 2005թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ «Լիբեր» ՍՊ ընկերությանն է օտարվել Կոմիտասի պող. հ. 5 հասցեի «Էլեկտրոնային» ՓԲ ընկերության տարածքում գտնվող քարշի ենթակայանը: Նույն՝ 2005 թ. նոյեմբերի 25-ի որոշմամբ, ընկերությանը թույլատրվել է Կոմիտասի պող. հ. 5 հասցեում «Էլեկտրոնային» ՓԲ ընկերության տարածքից առանձնացված հատվածում կառուցել բազմաբնակարան բնակելի շենք: Միաժամանակ «Լիբեր» ՍՊ ընկերությանը պարտավորեցվել է տարածքում գտնվող քարշի հին ենթակայանի փոխարեն կառուցել նոր, տեխնիկապես առավել արդիական քարշի ենթակայան:

Վերը նշված հասցեով հողատարածքը առանձնացված եւ պարսպապատված է, այն երբեւիցե որպես որեւէ բնակելի շենքի բակային տարածք կամ այգի չի ծառայել, այլ եղել է «Էլեկտրոնային» ՓԲ ընկերության տարածքը:

Երեւանի խաղաքաղաքացու կողմից բազմաբնակարան բնակելի շենքի եւ քարշի նոր ենթակայանի կառուցման համար տրվել է ճարտարապետահատակագծային առաջադրանք, համաձայնեցվել է նախագիծ եւ տրամադրվել է շինարարության թույլտվություն: Ընդ որում, ընկերությունը շինհրապարակ կարող է կազմակերպել եւ շինարարական աշխատանքներ կատարել բացառապես հատկացված տարածքում, որն, ինչպես ասվեց, առանձնացված է եւ պարսպապատված:

Նախագծային փաթեթը անցել է համապատասխան փորձաքննություն:

Բազմաբնակարան բնակելի շենքը եւ քարշի ենթակայանը հարեւան բնակելի շենքերից տեղադրված են նորմատիվ հեռավորության վրա եւ որեւէ կերպ չեն կարող խոչընդոտել հարեւան շենքերի նորմալ կենսագործունեությանը:

Բնակչի «ինչու խաղահրապարակներ չեն կառուցում» հարցն առնվազն հոռետրական կարելի է համարել, քանզի Երեւանի խաղաքաղաքացին արդեն մեկ տարուց ավելի է հետեւողականորեն իրականացնում է մայրաքաղաքի բակերի բարեկարգման, կանաչապատման քաղաքականություն: Հարյուրից ավելի բակերում արդեն իսկ ձեւավորվել են ժամանակակից խաղահրապարակներ, եւ այդ ծրագիրը շարունակական է: Որեւէ բակային տարածքի հաշվին քաղաքացին կառուցապատման շինթույլտվություն չի տրամադրում: Ավելին, Երեւանի խաղաքաղաքացին, դիմելով բնակչությանը, բազմիցս հայտարել է, որ բոլոր այն բակերում (այդ թվում նաեւ հոդվածում նշված բակում, որտեղ դեռեւս խորհրդային տարիներից, տարիներ շարունակ իրենց իսկ կողմից տեղադրված ավտոտնակների առկայությունից այդքան դժգոհում է բնակիչը), որտեղ բնակիչները կամովին կապիտալացնեն իրենց ավտոտնակները եւ կազատեն տարածքը, խաղաքաղաքացին ամենակարճ ժամկետում ժամանակակից խաղահրապարակներ կկահավորի:

Երեւանի խաղաքաղաքացի

Խմբ. կողմից. Պետք է փաստել, որ Երեւանի խաղաքաղաքացիի պարզաբանումներն այնքան էլ հուսադրող չեն: Եթե բնակելի շենքից մի քանի մետր հեռավորության վրա 3 մետր բարձրությամբ ենթակայան է կառուցվում, ապա շենքի առաջին հարկի բնակիչները կզրկվեն լուսավորությունից եւ նրանց տները կմնանվեն նկուղի: Շենքին այդքան մոտ ենթակայանի կառուցումը պարունակում է առողջապահական լուրջ խնդիրներ: Յուրաքանչյուր բժիշկ կփաստի, որ մագնիսական դաշտի առկայության պարագայում առաջանում է գլխացավ, ճնշման տատանում, ինչը կարող է հանգեցնել արյունազեղման (ինսուլտի), ուրտի եւ ուղեղի կաթվածների: Կանաչ այգու պատկանելության հարցն էլ քննարկման ենթակա չէ: Կարեւոր չէ, այն ենթակայանի, բնակիչների, խաղաքաղաքացիի թե մեկ այլ գերատեսչության տրամադրության տակ է գտնվում: Բնակիչների մտահոգությունն այն է, որ այգին պահպանի ներկայիս տեսքն ու ծառերը եւ թուփերը չհատվեն: Բացի այդ, ինչպես հավատիացնում են բնակիչները, 90-ականների ցուրտ ու քաղաքացիներին հենց նրանք էին այգին հսկում ու հերթապահում, որ այգու ծառերը չկտրեին ու որպես վառելիք չօգտագործեին:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 25/08/2010 21:18 Page 1

ԱԶԳ

Հարցազրույց

Գալուս Սահակյան. «Հորդորենք, որ պետությունները գործընթացներ սկսեն Ղարաբաղի անկախության առումով»

Երեկ «Հենարան» ակումբում ասուլիսած ՀՀԿ փոխնախագահ Գալուս Սահակյանին ուղղված լրագրողական հարցերը պտտվում էին համարյա միայն հայ-ռուսական վերջին պայմանագրերի շուրջը, ասել է թե՝ թեման դեռ իր թեժությունը չի կորցնում: Այս թեմայով հնչած հանրահայտ իշխանական տեսակետների շեշտադրումներին երեկ ՀՀԿ փոխնախագահը մի քանի նոր նրբերանգներ ավելացրեց, որոնք, կարելի է ասել, առավել նոր հարցեր էին առաջացնում: Նախ՝ որ մեզ համար պայմանագրերը եւ հատկապես ռազմաբազայի պայմանագրի ժամկետների երկարաձգումը մինչեւ 49 տարի Հայաստանի համար շահեկան են, տարածաշրջանային առումով դրական կրում են «ոչ պատերազմին» գաղափարախոսությունը, այսինքն՝ ամեն տիպի կոնֆլիկտները պիտի լուծվեն դիվանագիտական-քաղաքական ճանապարհով:

Միեւնույն ժամանակ Սահակյանը ընդունում էր ռազմաբազայի հետ կապված մտահոգությունները. «Լավ բան չէ, երբ ռազմաբազաներ են տեղադրում այս կամ այն երկրում, մասնավորապես մեզ համար, բայց միեւնույն ժամանակ բոլորիս ցանկությունն է այնպիսի հզոր պետություն ունենալ, որ մենք ռազմաբազաներ տեղադրենք այլ պետություններում (ԼՂՀ-ն նկատի ունի, թե՞ հզոր պետությունները՝ չիմացանք)», ասաց նա՝ շեշտելով նաեւ, որ հայկական կողմը շահավետ դուրս եկավ այս հարաբերություններից եւ այսուհետեւ ավելի լայնածավալ դիվանագիտական հարաբերություններ կիրականացնի նաեւ ղարաբաղյան խնդրում, առավել եւս Հաագայի դատարանի որոշումից հետո Կոսովոյի հարցում. «Պիտի ակնհայտ դարձնենք եւ հորդորենք, որ պետությունները սկսեն գործընթացներ նաեւ Ղարաբաղի անկախության առումով, որը, ես կարծում եմ, պիտի պետությունների կողմից ճանաչվի միջազգային իրավունքի սուբյեկտ, իսկ սա նշանակում է ներկայացուցչական մարմիններ ունենալ տարբեր պետություններում հենց Ղարաբաղի կողմից», որի շնորհիվ ավելի ինֆորմացված կլինեն պետությունները, եւ ավելի կառուցողական մեկնություններ կարող են առաջանալ Ղարաբաղի խնդրի առումով:

«Կարդացե՞լ եք պայմանագիրը»՝ «Հայլուրի» հարցին ի պատասխան Գ. Սահակյանը նախ կատակեց. «Վա՜յ, մոռացել եմ կարդամ», հետո հարցն ամբողջությամբ լսելով, թե պայմանագրում Հայաստանը քանի՞ կիլոմետրով է նշված, ասաց, որ ուշադրություն չի դարձրել, բայց կարծեք պայմանագրում այդպիսի բան չկա: Իսկ հարց տվողը նկատի ուներ, թե ՀՀ ասելով՝ ռուսները նկատի ունե՞ն նաեւ Ղարաբաղը. «Ես Հայաստանի անվտանգություն ասելով՝ նկատի ունեմ միայն Ղարաբաղը: Ռուսներին հաջ հայտնի է, որ մեր խնդիրների կիզակետում, մեր քաղաքական եւ դիվանագիտական պրոցեսներում հիմնական լեյտմոտիվը Ղարաբաղն է»: Հարցը տարբեր ձեւաչափերով շարունակվեց. եթե Ղարաբաղում պատերազմ սկսվի, ռուսները կմիջամտե՞ն. «Ղարաբաղում նախ պատերազմ չի սկսվի, երկրորդ, եթե սկսվի, ու եթե մենք հույսներս մեր վրա լավ դնենք՝ ոչ միայն ռուսները կպաշտպանեն, այլեւ շաս-շաս պետություններ: Խնդիրն այն է, թե մենք որքա՞ն կարողություններ ունենք. ուժեղի կողքին միշտ ուժեղները կանգնում են»:

Ըստ նրա՝ քաղաքական պայմանագրի արտաքին քաղաքական

մաններն առաջադրում են նաեւ քաղաքական մոտեցումներ, եթե նորացված պայմանագրում արձանագրված է, որ ռուսական զորքերը, բազան Հայաստանի անվտանգության խնդիրներին պիտի զորավիգ լինեն, Հայաստանի անվտանգության խնդիրների առաջին գործոնն էլ կապված է Ղարաբաղի հետ: Սա բնականաբար հաշվի են առել ե՛ւ ռուսական, ե՛ւ հայկական կողմերը, իսկ պատերազմական իրողություններում ինչպիսի՞ զարգացումներ կլինեն, դա բավականին հեռու է այսօրվա կանխավարկածներից, ըստ Սահակյանի. «Երբ ասում ենք՝ ռուսական բազաները մեզ կսպասարեն անվտանգության առումով, ես չեմ կարծում սա միակ ելքն է Ղարաբաղի խնդրի լուծման կամ մեր անվտանգության ապահովման: Սա գործոններից մեկը կարող է լինել», մի փոքր իր նախորդ ասածի ուղղությունը փոխեց Սահակյանը, նկատելով, որ մեր ուժերի վրա պետք է հիմնվենք նախ: Իսկ թե ինչո՞ւ ժամկետից շուտ երկարաձգվեց ռազմակայանի պայմանագիրը եւ ինչո՞ւ 49 տարով՝ Գ. Սահակյանը հղում արեց տարածաշրջանային եւ քաղաքական խնդիրներին, ինչպես նաեւ այն նոր միջպետական ծրագրերին, որոնք ավելի տեւական ժամանակ են ընդգրկելու. «Սա նաեւ Ռուսաստանի համար երաշխիք է այն տնտեսական փոխհարաբերությունների ծավալների առումով, որը առաջիկայում իրողություն է դառնալու՝ կապված ատոմակայանի (ատոմակայանի շինարարությունը երեւի 6-8-9 տարի տեւի), առավել եւս՝ Իրան-Հայաստան երկաթգծի ներդրումային քաղաքականության, նավթամթերքների եւ այլնի հետ... այս ծրագրերն իրողություն են դառնում մոտավորապես 10 տարի շրջանակներում եւ արդեն որպես բիզնես ծրագրեր իրագործվում են եւս 10-15 տարվա շրջանակում: Հենց տնտեսական երաշխիքների հետ է կապված նաեւ 49 տարի թիվը»:

Ռուսական բազաների համաձայնագրի արտաքին քաղաքական հետեւանքների առումով՝ Հայաստան-Եվրոմիություն, Հայաստան-ԱՄՆ եւ այլ համատեքստերում Գ. Սահակյանը մտահոգություն չուներ. «Նման գործընթացները առավոտ կամ երեկո չեն ծնվում՝ դրանք բավականին երկար-ծավալուն գործընթացներ են, որոնք իրենց շարունակական պրոցեսներն ունեն: Հետեւանքները նախ կախված են ռուս-ամերիկյան փոխհարաբերություններից, ութնյակի շրջանակի փոխհարաբերություններից, Ռուսաստան-Թուրքիա, Ամերիկա-Իրան փոխհարաբերություններից. այսինքն՝ հետեւանքը բազմածավալ, ամբողջ աշխարհի քաղաքական պրոցեսների առումով է... Ես չեմ կարծում, որ Եվրոմիությունն հասկացությունը մի կառույց է, որ օրուգիշեր նստած մտածում է հայերի եւ Հայաստանի մասին: Սա Եվրոմիության համար ընդամենը կարող է քննարկելի խնդիր լինել, իսկ փոխհարաբերությունների առումով՝ նախ մենք Եվրոմիության անդամ չենք, հատուկ ծրագրերում ենք ներառված, կարծում եմ՝ դրանք ավելի կակտիվանան, որովհետեւ ավելի երաշխավորված տարածաշրջանում են իրագործվելու այն բոլոր ծրագրերը, որոնք համատեղ, Հարավային Կովկասում եւ ոչ միայն Հայաստանում իրագործվել են Եվրոմիության կողմից»:

Եթե Ղարաբաղի հարցը լուծվի ավելի շուտ, քան 49 տարին է, ռուսական ռազմակայանի գոյությունն ավելորդ է դառնում. «Ռուսական ռազմաբազաների գոյությունը չի ստեղծվել Ղարաբաղի հարցի կամ Հայաստանի համար. դրանք ծնվել են Սովետական Միությունը քանդվելու պրոցեսում եւ որպես նախկին Սովետական Միության սահման՝ այդ բազաները պահպանվել են Հայաստանում ժամանակին գործող իշխանությունների պայմանավորվածություններով, որը ես ճիշտ եմ համարում»: Լրագրողը ճշտեց՝Հայաստանին պետք չլինելու դեպքում ռուսական բազաները կմնա՞ն. «Ոչ, ամեն գործընթաց շահեկանության պայմաններում է որոշվում եւ ոչ թե ինքնանպատակ»:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սպասենք Քուվեյթի ԱԺ նախագահի այցելությանը

Քուվեյթում Հայաստանի դեսպան Ֆադեյ Չարչողլյանը օգոստոսի 23-ին հանդիպել է Քուվեյթի Պետության Ազգային Ժողովի նախագահ Մուհամմադ Ջասեմ ալ Խուրաֆիի հետ: Ըստ ԱԳՆ-ի հաղորդագրության՝ հանդիպմանը քննարկվել են հայ-քուվեյթյան միջխորհրդարանական հարաբերությունների զարգացման հնարավորությունները: Քուվեյթի Ազգային Ժողովի նախագահը հայտնել է, որ խորհրդարանում սկսվել են հայ-քուվեյթյան միջխորհրդարանական բարեկամության խմբի ձեւավորման աշխատանքները:

Երկուստեք ընդգծվել է խորհրդարանական պատվիրակությունների փոխայցելությունների ակտիվացման, բարեկամության խմբերի կարգերի ամրապնդման, ինչպես նաեւ Հայաստանի եւ Քուվեյթի օրենսդիր մարմինների իրավապայմանագրային դաշտի ընդլայնման կողմերի պատրաստակամությունը: Զրուցակիցներն անդրադարձել են նաեւ տարածաշրջանային վերջին զարգացումներին:

Հանդիպման ավարտին դեսպան Չարչողլյանը Մուհամմադ Ջասեմ ալ Խուրաֆիին է հանձնել Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանի՝ Հայաստան այցելության հրավերը:

Ա. Հ.

ՄԻՐՏ ՄԻԵՎՆՈՒՅՆ ՕՈՒՌ ՀԱՅԵԼԻՆ

Պատմությունը պիտի փորփրել միայն ճշմարտությունը վերհանելու համար

Հայաստանում տեղակայված ռուսական ռազմաբազայի երկարաձգման առնչությամբ Ադրբեջանում տարբեր մեկնաբանություններ են անում՝ մասնավորապես փորձ անելով նաեւ տպավորություն ստեղծել, թե իբր Հայաստանը ռազմականապես թուլացել է, եւ հայերը նոր պատերազմի հեռանկարից մտահոգ՝ խնդիր ունեն Ռուսաստանի միջոցով ապահովագրելու իրենց անվտանգությունը: Իրականում Ադրբեջանի կողմից Հայաստանի նկատմամբ ոչ մի սպառնալիք էլ գոյություն չունի, որովհետեւ Ադրբեջանը Հայաստանի հետ լարվածություն ունի միայն Լեռնային Ղարաբաղի հետ կապված: Իսկ Թուրքիան ընդամենը կարող է բարոյահոգեբանական խթան լինել իր ցեղակիցների համար, ինչպես որ դա եղել է ղարաբաղ-ադրբեջանական պատերազմի ժամանակ՝ 1992-1994 թվականներին: Ասել է թե՝ հիմնական սպառնալիքներն ուղղված են հենց ԼՂՀ-ի դեմ: Այլ հարց է, որ Հայաստանը հանդես է գալիս որպես ԼՂՀ-ի անվտանգության երաշխավոր եւ Ղարաբաղում ռազմական գործողություններ ծավալվելու դեպքում ուղղակի մասնակցություն է ունենալու՝ դրանից բխող եւ պատմությանն արդեն ծանոթ հետեւանքներով:

Այստեղ թերեւս տեղին է հիշել Օսսո Բիսմարկի հայտնի խոսքերը, երբ ասում էր, որ պետք է գերմանացուն օգնել միայն ձին հեծնելիս, իսկ վարգել նա հաստատ կկարողանա: Այսինքն՝ Ադրբեջանի մտավախությունը հայերի՝ անհրաժեշտ սպառազինությամբ ապահովված լինելու մեջ է, իսկ որ հայերը հրաշալի մարտնչել գիտեն՝ Բաքվում նույնպես չեն կասկածում: Դժվար է հավատալ, որ հայ-ադրբեջանական ճակատում ռուս զինվորը կկռվի ադրբեջանցի ասկյարի դեմ, եթե, իհարկե, այլ հանգամանքներ նրան չպարտադրեն: Ադրբեջանն էլ, ինչպես միշտ, զգուշավոր է մնալու ռուսական սվինի հանդեպ ու չի հանդգնի դավագրգռել իր հյուսիսային գերհսկային:

Ադրբեջանն ինքն է մտահոգ, քանզի վերջին տարիներին արված հսկայական ռազմական ծախսերն ի չիք են դարձնում այս ոլորտում գերակշռության հասնելու նրանց ջանքերը: Մնում է հուսալ, որ հարեւան երկիրը ստիպված կլինի այսուհետեւ մեղմացնել կամ էլ պարզապես հրաժարվել ռազմական հռետորաբանությունից: Ադրբեջանի քարոզչական զինանոցն, անշուշտ, բավականին հարուստ է, եւ սեփական լսարանի փիմին համար թեմաներ հաստատ կգտնվեն:

1news.az էլեկտրոնային պարբերականն, օրինակ, պետական քարոզչամեքենայի հոգեպահուստը պեղելով՝ արդեն ինքնամխիթարող «պատմական նոր փաստ» է գտել սեփական լսարանին մատուցելու համար: Պարզվում է, ըստ այդ պարբերականի, հայտնաբերվել են լեգենդար Ավոյին սպանողները: Երբեւէ ադրբեջանցիների ահուսարսափը համարվող Մոնթե Մելքոնյանի կերպարը երեւի նրանց հանգիստ չի տալիս նույնիսկ հայ քաջորդու զոհվելուց 17 տարի անց, այլապես ինչի՞ պիտի նոր աստ հորինվեր 1993-ի հունիսի 12-ին Աղդամի շրջանի Մարզիլլու գյուղի մերձակայքում տեղի ունեցած ողբերգական դեպքի շուրջը:

Այդ մասին 1news.az-ի թղթակցին աղավաղումներով, նույնիսկ տեղանունները փոփոխելով, պատմում են ադրբեջանական բանակի նախկին կամավորականներ Էլչին Գահրամանովն ու Սահիբ Շիրինովը: Նրանք, սակայն, էական մանրամասներ չեն ներկայացնում, պարզապես նշում են, որ «Ավոյին սպանել ու նրա գլուխը կտրել է» իրենց դիվերսիոն խմբի ղեկավար Իբադ Հյուսեյնովը: Զարմանալի է, որ վերջինս առ այսօր ազգային հերոսի կոչում չի ստացել (թե՞ արդեն ստացել է): Նողկալին միայն իրական դրվագները ենթագիտակցությունից չէ, այլեւ այն, որ փորձ է արվում արցախցիների համար սրբազնացած Մոնթե Մելքոնյանին ներկայացնել իբրեւ միջազգային ահաբեկչի:

Ղարաբաղյան պատերազմի ժամանակ ադրբեջանական զինուժի կազմում հայերի դեմ կռվում էին նաեւ այլազգի հազարավոր վարձկաններ, որոնց թվում էր, մասնավորապես, հանրահայտ ահաբեկիչ Բասաեւը (վերջինս անձամբ է խոստովանել դա՝ միաժամանակ շեշտելով ղարաբաղցիների մարտական բարձր ոգին), բայց ղարաբաղյան կողմը նման փաստերը սենսացիա չի դարձնում, այն էլ՝ կեղծելով իրադեպերը: Պատմության անհայտ էջերը պիտի փորփրել միայն ճշմարտությունը վերհանելու համար, մինչդեռ 1news.az-ի խնդիրը հազիվ թե դա է: Իսկ թե ո՞րն է, ավելի ստույգ կիմանան Բաքվում:

Ի դեպ, առաջիկայում նման կարգի թեմաները հարեւան երկրում երեւի առավել պահանջված են լինելու, քանզի պատերազմակոչ հայտարարությունները եւ հատկապես զինական ցուցադրամոլությունները հայ-ռուսական նորացված պայմանագրի գործողության պարագայում այլեւս իմաստազրկվում են:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Ադրբեջանում վախենում են հայ-թուրքական սահմանի բացումից, բայց ...

1-ին էջից

Հասանովի հավաստմամբ՝ հենց վերջիններս էլ «բազմիցս հայտարարել են, որ քանի դեռ Հայաստանը չի ցուցաբերել կառուցողական դիրքորոշում ղարաբաղյան հարցի կարգավորման գործում (կառուցողական՝ Ադրբեջանի ընկալմամբ - Ա.Հ.), Հայաստան-Թուրքիա սահմանը չի բացվի»:

Վստահաբար, հենց Ադրբեջանում էլ գիտեն, թե ճշմարտացիության ինչ տոկոս ու հետեւողականության ինչ դրսեւորումներ կարող է հանդես բերել թուրքական իշխանությունը: Այդուհանդերձ, Հասանովը հայտարարել է, թե Բաքուն հավատում է Թուրքիայի պատշտոնատար անձանց:

Հասանովը նաեւ հայտարարել է, թե Ադրբեջանը չի անդամակցի ՆԱՏՕ-ին կամ ՀԱՊԿ-ին, քանի դեռ նրանք «չեն դատապարտել Հայաստանին որպես ագրեսորի»: Ըստ Հասանովի՝ Ադրբեջանը հրաժարվում է անդամակցել ՀԱՊԿ-ին, որպեսզի Հայաստանի հետ մեկ կազմակերպության մեջ չլինի՝ թերեւս մոռանալով, որ ՄԱԿ-ից սկսած մինչեւ Եվրոպայի խորհուրդ Ադրբեջանը ոչ միայն անդամակցում է, ինչպես Հայաստանը, այլեւ երբեմն, ուզած-չուզած, այբուբենի պարտադրանքով տարբեր քննարկումներում տեղավորվում Հայաստանի կողքին:

Ինչ վերաբերում է N5 արձանագրությանը, որ ստորագրվեց Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ, ապա Ադրբեջանում, պարզվում է, ուսումնասիրում են այդ համաձայնագիրը: Հասանովն, ամենայն հավանականությամբ զուտ պրոպագանդիստական մղումներով առավել թունդ արտահայտություններ անելու ցանկությամբ ու իրողությունները մոռանալով, հայտարարել է, թե այդ արձանագրությունն ուսումնասիրվում է Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին փաստաթղթում նշված սահմանափակումներից ելնելով:

Մինչդեռ քանիցս է նշվել, որ Ադրբեջանը արդեն գերազանցում է այդ ծավալները: Իսկ Ադրբեջան-Ռուսաստան ռազմական համագործակցության հնարավորություններին առումով էլ Ադրբեջանում, պարզվում է, պայմաններ են թելադրում Ռուսաստանին՝ ԼՂ հարցի հետ կապված, դրա համար էլ մինչ օրս այդ համագործակցությունը չի ստացվում:

AZG NEW PDF.qxd 25/08/2010 20:57 Page 1

Ամառային «էյուդներ»

Արեւորդիները՝ ամառային դպրոցում

Երբ 5-6 տարեկան տղան ուժով մեկ ընկած ծառի բնին մոտ ծիլ տված ու փոքր առաջ եկած բարալիկ ճյուղի վրա ամեն կերող ուզում էր պոկել, մայրը, զարմանալի էր, ոչինչ չէր ասում: «Ճյուղը մեղք է, նա էլ քեզ պես փոքրիկ է»՝ երբ կողից լսվեց մեկի ձայնը, կինը հասկացավ, որ երեխային, այնուամենայնիվ, պետք էր սաստել: Ցավոք, ծնողներից շատերը, որոնք պիտի դաստիարակեն իրենց երեխաների վերաբերմունքը շրջակա միջավայրի, բնության հանդեպ, իրենք են տիաս այս հարցերին:

Անտառը՝ ընկղմված ծանր խոհերի մեջ՝ շարունակում է դարերի դանդաղ ընթացքը: Իր կյանքն է ապրում անտառն ու հետն էլ ապրեցնում մեզ: Առավոտվա օդի սաստիկ մաքրությանը մայրաքաղաքի աղտոտված թթնոլորտին սովոր մեր ընչուղիները թվում է՝ չեն դիմանալու:

Ծաղկաձորը հայաստանյան բնաբխարհի ամենափնտրված հանգստյան գոտիներից է համարվում եւ գերհագեցած է ամառանոցային վայրերով ու հանգստյան տներով: Լինելով նաեւ ամենասուղը, այդուհանդերձ, չնայած քաղաքի կենտրոնական մասը՝ փոքրիկ հրապարակով եւ դրանից ճյուղավորվող մի քանի գլխավոր փողոցներով, որ մաքուր ու բարեկարգ են՝ հանգստավայրերի մերձակա տարածքները այդքան էլ խնամված չեն. խոսքը վերաբերում է հատկապես կանաչի ձեւավորմանն ու ծաղկապատմանը: Ինչպես եւ Երեւանում խոշոր գումարները ծախսվում են կառուցապատման, շինարարական աշխատանքների վրա, իսկ գեղագիտական՝ ծաղկապատման, բարեկարգման առումով ժլատությունը ակնհայտ է: Մոտակա անտառն էլ բավականին անփույթ վիճակում է, եւ անգամ Կեչառիսի եկեղեցու բակը խնամված չէր բավարար: Հատկապես վանքային համալիրի եռնամասի տարածքը, որտեղ խաչքարերն ու շիրմաքարերը չորացող ու երկարող խոտերի մեջ խճճվել էին...

Հետաքրքրական է՝ ի՞նչ է պետք անել, որ ասենք հայ տղամարդը հասկանա, որ մեքենայի աղակու փեղկից ծխախոտի տուփ կամ որեւէ այլ բան փողոց նետելը լավ չէ, կամ անհոգության դատարկ ժպիտը դեմքերին ջահելները հրապարակի նստարաններն ու գետինը չծածկեն արեւածաղկի կճեպների հատ շերտով, կամ երիտասարդ մայրը երեխային բացատրի, որ գազոններում աճած ծաղիկները գեղեցկացնում են շրջապատը եւ պետք չէ պոկել ու դես ու դեն շաղ տալ: Այս ֆոնի վրա ուրախանում ես, որ շրջակա միջավայրի, բնության հանդեպ խնամքոտ եւ ուշադիր վերաբերմունք ունեցողներ կան: Ասենք, պատանի արեւորդիները:

ՀՀ վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի «Արեւորդի» էկոակումբները գործում են Երեւանում եւ Հայաստանի տարբեր մարզերում: Նրանց գործունեության մասին հանրությունը տեղյակ է հատկապես հիմնադրամի 2 միջազգային փառատոների տրավորիչ ծրագրերից: «Արեւորդի» էկոակումբի սաները տարվա այս եղանակին ամառային դասընթացների են մասնակցում: Անցած տարվա պես այս անգամ էլ նրանք Ծաղկաձորի գրողների ստեղծագործական տանն էին, որտեղ կազմակերպված ամառային դպրոցին մասնակցող 62 արեւորդիները ուսումնասիրում էին Ծաղկաձորի կենսաբազմազանությունն ու ջրի վիճակը: Իրենց մեկնելու նախօրեին Գրողների ստեղծագործական տան դահլիճում «Արեւորդիների» 9 էկոակումբների սաները մասնագիտական ժյուրիի դային հանձնեցին իրենց բնակավայրերում առկա եւ նկատված բնապահպանական հիմնահարցերին վերաբերող ծրագրեր՝ առաջարկելով դրանց լուծման եղանակներ: Ներկայացված էր նաեւ Հայաստանի կարմիր գրքում պահպանվող կենդանիների եւ բուսատեսակների ֆոտոցուցահանդես՝ երկու պարագայում էլ՝ մրցանակաբաշխությամբ:

Բոլոր ինը էկոակումբների ներկայացրած ծրագրերը օգտակար էին, անհրաժեշտ հանրայնորեն, խելացի մտածված: Սակայն ամենահաճելին պատանիների, որոնք հիմնականում Հայաստանի տարբեր մարզերից էին, պահվածքն էր՝ ազատ, թեթեւ, անկաշկանդ ու բնական եւ նյութը մատուցելու եղանակը՝ գեղեցիկ, գրագետ հայերենով, հստակ, սահուն արտաբերմամբ՝ ժյուրիի հարցերին խելացի, արագ կողմնորոշվող պատասխաններով: Այս ծրագրերի միջոցով պատանի բնապահպանները հեռագայում փորձելու են իրենց օգտակարությունը բերել բնության, շրջակա միջավայրի պահպանման խնդիրներին:

Երեւանի էկոակումբի սաների «Հոսող կյանք» ծրագիրը մի մոտեցում է ջրի խնայողության, այդ նպատակով նրանք նախատեսել են մայրաքաղաքի կենտրոնական հատվածների 50 ցայտաղբյուրների վրա փականներ ամրացնել՝ օգտագործելուց հետո ջուրը փակելու համար: Սիսիանի էկոակումբի սաները նկատի ունենալով բնապահպանական հարցերին բնակչության անտեղյակությունը, որոշել են հրատարակել «Կանաչ ամսագիր» հանդեսը, տպագրության համար օգտագործվելու է վերամշակված թուղթ: «Նորադուս» էկոակումբի ուշադրության կենտրոնը Գավառա գետի աղտոտվածության խնդիրն է, ծրագրի նպատակն է մաքրել դեպի Սեւան հոսող գետի ջրերն ու ափերը մերձակա գյուղաբնակների թափած աղբից, տեղադրել աղբամաններ, նույնիսկ թաքնված նկարահանումներ են անելու: Գառնի-Գողթ ակումբի սաները ներկայացրին անվանգ գյուղատնտեսության ծրագիր, մերժելով քիմիական պարարտանյութերը՝ որոնք առաջարկում են օգտագործել սննդի մնացորդներից, չորացած տերեւներից ստացվող կոմպոստ:

Գյումրիի էկոակումբի ծրագիրը քաղաքի քարհիզների մաքրմանն ու պահպանմանն է ուղղված, նաեւ տեղի բնակիչներին իրազեկելու ստորգետնյա այդ հնագույն քարե ջրատարների պատմամշակութային, տնտեսական եւ սոցիալական նշանակության մասին: Վանաձորցի պատանիների «Կանաչ դպրոց» ծրագիրը պլաստմասսայե շշերի հավաքչական աշխատանքներ է նախատեսում, իսկ դիլիջանցիները ուշադրությունը կենտրոնացնելու են տեղեկատվական քարոզարշավների վրա: Եղեգնաձորցի պատանի բնապահպանները տեղի Միկոյանի պուրակը փորձելու են բարեխնամ տեսքի բերել՝ աղբամաններ տեղադրել, գիշերային լույսերի ցանց անցկացնել: Ուրծաձորցիների «Անսպառ թղթապանակը» թղթի թափոնի հավաքման եւ վերամշակման ծրագիր է. այս առումով նրանց համագործակցությունը Սիսիանի իրենց ընկերների հետ արդյունավետ կլինի, քանի որ վերջիններս վերամշակված թղթով ամսագրի տպագրության փորձ են անելու: Նրանք նույնիսկ գյուղի գործազուրկ բնակիչների համար աշխատատեղեր են նախատեսել:

Ինքնին հասկանալի է, որ այսպիսի ծրագրերը, որի շնորհանդեսից գնահատող ժյուրին (բնապահպանության նախարարության, ՄԱԿ-ի, UNISEF-ի ներկայացուցիչներ) ակնհայտորեն դրական տպավորությամբ հեռացավ, առանց համապատասխան կառույցների աջակցության (քաղաքաթեատրաններ, թաղապետարաններ, բնապահպանական կազմակերպություններ), իրագործել դժվար կլինի: Ուստի արդյունավետ համագործակցությունը փոխադարձ շահավետ կլինի՝ պատանիներին ավելի ոգեւորելու եւ գործնական քայլերի մղելու առումով նաեւ, իսկ արեւորդիների գործունեության հիմնական մոտիվը, իհարկե, ուղղված է վերափոխելու մարդկանց մտածողությունը, գործող կարծրատիպերը, նրանց ավելի ուշադիր դարձնելու շրջակա միջավայրի հանդեպ:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻ

ՇՊԱԿ-ի փոխարեն՝ հակակոռուպցիոն կենտրոն

«Ասպարեզ» ակումբի նախաձեռնությունը

Գյումրու Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբն ավարտել է «Շիրակի մարզի շահերի պաշտպանության եւ աջակցման կենտրոն» (ՇՊԱԿ) ծրագիրը, որն իրականացնում էր 2008 թ. հոկտեմբերից, «Թրանսպարենսի ինթերնեյշընլ հակակոռուպցիոն կենտրոնի» եւ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի սերտ համագործակցությամբ: Ծրագրի իրականացման նպատակը կոռուպցիայից տուժած քաղաքացիներին ու կազմակերպություններին իրավաբանական աջակցության ու դասական պաշտպանության ցուցաբերումն էր, այսինքն՝ իրականացվում էր հակակոռուպցիոն կենտրոնի գործառույթ:

Ինչպես նշվում է ծրագրի ավարտի առթիվ տարածված մամուլի հաղորդագրությունում, անցած 22 ամիսների ընթացքում կենտրոն է դիմել 352 շահառու, որոնցից 324-ին մատուցվել է իրավաբանական խորհրդատվություն, մասնավորապես՝ կապված տեղական, պետական իշխանության մարմինների, շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարողների գործողությունների կամ անգործության, ինքնիրավչության, կաշառակերության եւ այլ հատկանիշներ նշող բողոքների հետ: Կենտրոնի շահառուներից 16-ի շահերի պաշտպանության համար նախաձեռնվել են դատական գործեր, որոնցից 14-ը անհաջող դատաքննության շնորհիվ բարեհաջող ավարտվել է շահառուների օգտին:

ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության եւ CASALS&Assosiates կազմակերպության դրամաշնորհային օժանդակությամբ իրականացված ծրագրի ավարտին, վերլուծելով ստացված բողոքները, շահառուների կարծիքները, Հայաստանի կոռուպցիոն իրավիճակը եւ միտումները, ինչպես նաեւ գործընկեր կազմակերպությունների ոլորտային փորձը, Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը նպատակահարմար է համարել սեփական եւ կամավորական միջոցներով շարունակել ծառայությունների մատուցումը կոռուպցիայից տուժած ֆիզիկական եւ իրավաբանական անձանց: Ակումբը ստեղծում է «Գյումրու հակակոռուպցիոն կենտրոն (ԳՀԿ)», որը մինչեւ սեպտեմբերի վերջ կկազմավորվի որպես ինքնուրույն հասարակական կազմակերպություն: Նախորդ ծրագրի նշված գործառույթներից բացի, ներկա կենտրոնի նպատակները կլինեն նաեւ հանրային միջոցների օգտագործման վերահսկումն ու այս ոլորտում չարաշահումների դեմ հետեւողական պայքարը, մասնակցությունը օրենսդրության, ՀՀ պետական եւ տեղական իրավակիրառ պրակտիկայի բարեփոխմանն այն հաշվով, որ կոռուպցիոն ռիսկերն իսկապես նվազեն: Իսկ մինչ նոր ՀԿ-ի կազմավորումը կենտրոնը շարունակում է սպասարկել իր շահառուներին:

Գ. Մ.

«Քարերի սիմֆոնիա» հուշարձանի քարերը վաճառում են 300 դրամով

Գառնու հանրահայտ «քարերի սիմֆոնիայի» պահպանությունը կրկին վտանգված է: Մի քանի տարի առաջ էլ մամուլում հաստվեցին հրապարակումներ, որ հուշարձանի քարերը պոկում են ու վաճառում: Այդ ժամանակ հնչում էր հանրահայտ մի շարք մարդկանց անունը, ովքեր հենց հուշարձանի քարերն էին օգտագործել իրենց ամառանոցը կառուցելու համար: Հայաստանի բնական հուշարձանների ցանկում ներառված այս հուշարձանն էլ գուցե անհետանա, եթե շատերի ագահությունը չափ ու սահման չճանաչի, ու գերատեսչությունների հանցավոր անտարբերությունը շարունակվի:

Առանց համապատասխան փաստաթղթերի հուշարձանի շրջակայքում մարդիկ փող են աշխատում: Գառնու ձոր ժամանած զբոսաշրջիկներին պարտադիր առաջարկում են հիանալ «Քարերի սիմֆոնիայի» հրաշալի տեսարանով, սակայն միայն համապատասխան գումարի պարագայում: «Էկոլուրի» փոխանցմամբ՝ եթե գումար չեն վճարում, «տոմսեր» վաճառող պապիկն ու իր «թիկնազորն» արգելում են ճանապարհը շարունակել: Սակայն միայն անօրինական զբոսաշրջությամբ հուշարձանի խնդիրները չեն սահմանափակվում:

Երիտասարդական կանաչ շարժման ակտիվիստ **Մարիամ Սուխուդյանի** ներկայացմամբ՝ 2007 թ. բնական հուշարձանի մասնատումն այսօր էլ շարունակվում է, եւ քարերը վաճառում են: «Մեքենաները քարը բերում են Արտաշատ, որտեղ ծաղկում է «քարի բիզնեսը»: Նման մեկ քարն արժե 300 դրամ: Քարերն օգտագործում են բարձրատիճան պաշտոնյաները....Պահանջում ենք իրավապահ մարմիններից՝ բացահայտել ու պատժել բարբարոսության հեղինակներին: Պահանջում ենք պատասխանել, թե ինչու մինչեւ օրս չկա պահակակետ: Պահանջում ենք սահմանել հատուկ կարգ՝ հուշարձանի պահպանման համար», սա մի հատված է բնապահպանության նախարարությանն ուղղարկած Մարիամ Սուխուդյանի դիմում-նամակից:

Բնապահպանության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի տեղեկացմամբ՝ բնապահպանական տեսչությունը Գառնու «Քարերի սիմֆոնիա» հուշարձանի տարածքը վերցրել է խիստ հսկողության տակ, մշտադիտարկում իրականացնելու համար առանձնացվել է մեկ պետտեսուչ:

«Ինչ վերաբերում է հուշարձանը պահպանելու համար պահակակետ ստեղծելու պահանջին, տեղեկացնում ենք, որ բնության հուշարձանների անձնագրերը գտնվում են կառավարության կողմից հաստատման փուլում, այսինքն՝ ներկայումս քարտեզները, սահմանները հաստատված չեն, առանձին հուշարձանների պահպանման ռեժիմներն ու այդ ռեժիմներն իրականացնելու համար ֆինանսական հատկացում նույնպես չկա», ասված է հաղորդագրության մեջ:

Վերոնշյալ հաղորդագրությանն իրենց անհամաձայնությունն են հայտնել կանաչ շարժման ակտիվիստները: «Ի՞նչ է նշանակում՝ ներկայումս հաստատված չեն հուշարձանների քարտեզները, իսկ ի՞նչ է արվում, որ հաստատվի: Ո՞ւմ ձեռնտու չէ, որ հաստատվի: իսկ ո՞ւր մնաց մեր մյուս պահանջը, որ ուղղել էինք իրավապահներին՝ գտնել ու պատժել մեղավորներին: Այս կետը անտեսե՞լ են: Ինչո՞ւ գործ չի հարուցվել», այսպես մեկնաբանեց հաղորդագրությունը Մարիամ Սուխուդյանը:

Հ. Հ.

AZG NEW PDF.qxd 25/08/2010 20:58 Page 1

«Մոսկվան հասկացրեց Բաքվին, որ պատերազմը Հայաստանի դեմ բացառված է»

Սակայն ինչպե՞ս պետք է «Մոսկվան հասնի Հայաստան»

Հայ-ռուսական՝ օգոստոսի 20-ին թարմացված պայմանագիրը Գյումրու ռուսական ռազմաբազայի վերաբերյալ, ինչպես նաեւ Մոսկվայի՝ հատկապես հեսխորհրդային տարածքում վերջին ժամանակներում նկատվող ակտիվությունը, ըստ մոսկովյան «Կարնեգի» կենտրոնի փոխտնօրեն Դմիտրի Տրենինի՝ նշանակում է, որ Ռուսաստանը հեսխորհրդային տարածքում երկարաժամկետ մարտավարություն է որդեգրել: Տրենինը հատուկ «Ազատություն» ռադիոկայանի համար պատրաստած մեկնաբանություններում ընդգծել է. «Հայ-ռուսական վերջին համաձայնագրով Մոսկվան նախ եւ առաջ երաշխավորում է Հայաստանի տարածքային ամբողջականությունը՝ չկենտրոնանալով միայն հայ-թուրքական եւ հայ-իրանական սահմանների վրա: Այս քայլով Ռուսաստանը նաեւ հասկացնում է ամեն գնով ԼՂ վերադարձի վերաբերյալ հայտարարություններով հանդես եկող Բաքվին, որ պատերազմը Հայաստանի դեմ բացառված է»: Տրենինը հավելել է նաեւ՝ նշելով, որ «հայ-ռուսական համաձայնագիրը կարող է նաեւ ՀԱՊԿ բարեփոխման սկիզբ դառնալ». «Հակամարտությունների կանխմանն ուղղված գործողությունների իրագործումը ՀԱՊԿ-ից լուրջ բարեփոխում կպահանջվի: Միայն այդ դեպքում կազմակերպությունը կկարողանա անվտանգություն ապահովող լուրջ կառույցի վերածվել», եզրակացրել է Տրենինը: Խոսելով, իր իսկ բնորոշմամբ, «տարածաշրջանի ամենադժվարին ու վտանգավոր կացության»՝ ԼՂ հիմնահարցի մասին, ռուս վերլուծաբանը նշել է, որ այժմ Մոսկվան զգուշացրել է Բաքվին, որ պատերազմը չի կարող դառնալ գործիք՝ խաղաքարեր ապահովման համար. «Մոսկվան պետք է խթանի Հայաստանին ու Ադրբեջանին, որպեսզի կողմերը գան խաղաղ համաձայնության: Ռուսաստանը Մինսկի խմբի մյուս համանախագահների, ինչպես նաեւ տարածաշրջանի հզոր պետության՝ Թուրքիայի աջակցությամբ, պետք է առաջնորդի կողմերին դեպի հարցի վերջնական հանգուցալուծում», եզրափակել է Տրենինը:

Թե որքանո՞վ եւ ո՞ւմ է անհրաժեշտ ու ձի՞շտ է արդյոք «Թուրքիայի աջակցությունը» ԼՂ հարցի խաղաղ կարգավորման գործընթացում, թողնենք դեպքերի հետագա զարգացմանը, որոնք չեն ուշանա արագ փոխվող մեր տարածաշրջանում: Անդրադառնանք ռուս հեղինակավոր վերլուծաբանի մեկ այլ մտքին՝ «Մոսկվան հասկացրեց ամեն գնով ԼՂ-ն պահանջող Բաքվին...». ի՞նչ է սացվում, փաստորեն օգոստոսի 20-ին թարմացված պայմանագիրը՝ Հայաստանի անվտանգությունը Ռուսաստանի հետ համատեղ պաշտպանելու վերաբերյալ, վերաբերո՞ւմ է նաեւ ԼՂ-ին, չէ՞ որ եթե «Հայաստանի դեմ պատերազմը բացառված է», ապա այդ պատերազմը ամենամեծ հավանականությամբ կարող է ծնվել միայն ԼՂ-ում: Մեկ ուրիշ հարց, իսկ ինչպե՞ս պետք է «պատերազմ բացառող» եւ ամենայն հավանականությամբ Բաքվին C-300 համալիր վաճառող Մոսկվան, համաձայն թարմացված պայմանագրի, «նորագույն զինամթերք մատակարարի ՀՀ ԶՈՒ-ին», ի՞նչ ճանապարհով: Ռուսաստանից Հայաստան կարելի է հասնել կամ Վրաստանով, որի տարբեր պաշտոնյաներ չեն հոգնում կրկնելուց, թե Վերին Լարսի անցակետով «որեւէ ռուսական փամփուշտ չի մտնի Հայաստան», բացի այդ՝ Թբիլիսին Բաքվին ռազմավարական դաշնակից է համարում, կամ Թուրքիայով, որը «հասկանալի» պատճառներով չի կարող թույլ տալ ռուսական զենքի ներթափանցումը Հայաստան, կամ Ադրբեջանով, որը պարզապես տրամաբանական չէ, կամ էլ «7 սար ու ծովով»՝ Իրանի միջոցով, որը, մեղմ ասած, ժամանակատար է եւ ոչ իրատեսական: Հետեւաբար հետաքրքրական կլինի պարզել, թե ո՞րն է ռուսական զենքը Հայաստան տեղափոխող ճանապարհը:

Ինչեւէ, «պատերազմ բացառող Ռուսաստանը» պետք է գտնի զենք տեղափոխող ճանապարհներ, մանավանդ որ այդ զենքը գնում է «դարավոր եղբայրական ու հյուրընկալ, հուսալի գործընկեր ու ռազմավարական դաշնակից» Հայաստան, որտեղ, ի դեպ, ռուսական ռազմական բազան տեղակայված է անվճար, ինչը նախադեպը չունի ամբողջ աշխարհում:

Հ. ԱՓՅԱՆ

Սուլթան Աբդուլ Համիդի ժառանգորդները պահանջում են

«Արմինյն միրոր սփեթեյթր» շաբաթաթերթի հունիսի 28-ի համարը արտատպել է «Հյուրիեթ դեյլի նյուս» թերթից Վերջիհան Զիֆիողլուի հոդվածը, որտեղ խոսվում է իրենց գերդաստանի առգրավյալ կալվածքների դիմաց թուրքական կառավարությունից փոխհատուցում ստանալու Սուլթան Աբդուլ Համիդ 2-ի (1842-1918) ժառանգների պահանջատիրական հայցի մասին:

Օսմանյան Թուրքիայում միահեծան իշխանություն հաստատած վերջին սուլթան՝ Աբդուլ Համիդ 2-րդի ժառանգները իրենց գերդաստանի նախկին անդամների՝ 4.200 տարբեր տեսակի ու չափերի, պետության կողմից առգրավյալ ունեցվածքի դիմաց մոտ 18 միլիարդ դոլարի փոխհատուցում են պահանջում: Դատական հայցի երկրորդ լսումը նախատեսված է սեպտեմբերի 30-ին: Դրան, ըստ լուրերի, մասնակցելու են տարբեր երկրներում ցրված ընտանիքի 48 անդամները: Նրանք նույնիսկ վճռել են Սամբուլում հաջողության չհասնելու դեպքում դիմել նաեւ մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Հայցվորներից մեկը՝ Օրհան Օսմանօղլուն (սուլթանի երրորդ սերնդի թոռը), ցույց տալով իր մոտ գտնվող փաստաթղթերը, գործընթացը անվանել է «դարի դատական հայցը» եւ ավելացրել, որ դատը շահելու դեպքում պատրաստ են «բանակցել գումարի շուրջը»:

«Մենք հողեր ու պալատներ չենք պահանջում, իրավաբես պատշաճում ենք մեր իրավունքները եւ ուզում ենք փոխհատուցում ստանալ այն կալվածքների դիմաց, որ մեր պապերն են գնել իրենց փողերով», ասել է նա բոլոր հայցվորների անունից խոսելով «Հյուրիեթ դեյլի նյուս» եւ «Էկոնոմիկ ռիվյու» պարբերականների լրագրողների հետ:

Պահանջատիրական այս քայլը զարմանք եւ շփոթ է առաջացրել որոշ պետական շրջանակներում: «Թոփքափու» պալատ-թանգարանի տնօրեն Իբեր Օրթայլին «տարօրինակ իրավիճակ» է կոչել տեղի ունեցածը, իսկ փաստաբան Դենիզ Քեթենջին նախընտրել է չմեկնաբանել, քանի որ որոշ բարդություններ կան այն առումով, որ պահանջատերերը թոռների թոռներն են: «Արանքում մի քանի սերունդներ կան: Պետք է սուզվեն այդ ժամանակվա հողային բոլոր փաստաթղթերը», նշել է նա:

Դատը շահելու դեպքում հատուցված գումարի մի մասը բաժանվելու է ժառանգների միջեւ, իսկ մյուս մասը փոխանցվելու է մի քանի ամսից ստեղծվելիք «Օսմանյան գերդաստանի հիմնադրամին»:

Նշելով, որ նախքան հայցը ներկայացնելը իր փաստաբանները պետական արխիվներում մանրամասն ուսումնասիրություններ են կատարել եւ գտել 16 փաստաթղթեր հողային մայրաններում, Օսմանօղլուն անդրադարձել է ամսորվելուց հետո օսմանյան գերդաստանի անդամների անցած ծանր տնտեսական «ուղուն»: «Կանայք բնակություն հաստատեցին աշխարհի տարբեր մեծ քաղաքներում՝ Փարիզում, Լոնդոնում, Նյու Յորքում, եւ իրավունք ստացան հայրենադարձվելու միայն 1952-ին Ադնան Մենդերեսի վարչակազմի հրամանագրի շնորհիվ: Տղամարդկանց այդ իրավունքը տրվեց 1974-ին Բյուլենտ Էջեւիթի իշխանության որոշակի հանդուրժողականությունը:

Այնուհետեւ ավելացրել է, որ 1974-ից հետո Սիրիայից իր ընտանիքի հետ Թուրքիա վերադառնալուց հետո 10 տարի նա չի կարողացել օգտվել իր քաղաքացիական իրավունքներից: «Իսկ մանկությունս Սիրիայում ծանր էր տնտեսական եւ բարոյահոգեբանական առումներով: Մեր դասատուները մեզ միշտ կշտամբում էին՝ ասելով. «Դուք զավթեցիք մեր երկիրը»: Պետք է շատ դժվարություններ հաղթահարեի», եզրակացրել է Օսմանօղլուն:

Թարգմ. Հ. Ծ.

ՉԺՀ-ում օդանավակայանի անկատարությունը՝ ավիավթարի հավանական պատճառ

Չինաստանում երեկ հայտնաբերել են օգոստոսի 24-ի ուշ երեկոյան Իշունի օդանավակայանի մոտ վթարի ենթարկված օդանավի «սեւ արկղերը»: Զախջախված օդանավի լուսանկարները հրապարակել է Սինհուա գործակալությունը, որի թղթակիցներն աշխատում են աղետի վայրում:

Խարբինից Իշուն թռած Ebmraer E-190 օդանավում կար 96 մարդ (ներառյալ անձնակազմը): Իշունում վայրէջք կատարելու պահին եղել է մառախուղ: Հաղորդվում է, որ օդաչուն մեխենան բավական կտրուկ ձեւով իջեցրել է թռիչքուղու կողմին: Նախնական տվյալներով, տվյալ սխալի պատճառն այն է, որ Իշունի փոքրիկ օդանավակայանը հարմարեցված չէ գիշերային ժամերին օդանավեր ընդունելու համար:

Ավիավթարի հետեւանքով օդանավը մասնատվել է եւ բռնկվել: Զոհվել է 42 մարդ: 54 վերապրողներից 7-ը ստացել են այրվածքներ, կտրվածքներ, վերջույթների կոտրվածքներ: Օդաչուն ստացել է դեմքի վնասվածքներ, սակայն նրա վիճակը այնքան էլ վատ չէ:

Սինհուա գործակալությունը հաղորդում է, որ վթարված օդանավում եղել են ՉԺՀ մարդկային ռեսուրսների եւ սոցիալական անվտանգության նախարարության մի խումբ բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ փոխնախարարը եւ 6 վարչությունների պետեր: Պատվիրակության անդամների մեծ մասը ողջ է մնացել, բայց փոխնախարարը ծանր վնասվածքներ է ստացել եւ, բժիշկների պնդման համաձայն, օրհասական վիճակում է:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

C-300-ը՝ Վրաստանի մտահոգության ուղեծրում

Հակահրթիռային պաշտպանության C-300 համալիրները Կովկասի համար խոսակցության ու քննարկումների տեղիք են տվել ոչ միայն Ռուսաստանի կողմից Ադրբեջանին դրանց վաճառքի հավանականության առումով: Հարեւան Վրաստանում էլ, ըստ իրենց իսկ տեղեկությունների, անհանգստության առիթներ կան:

Վրաստանի իշխանությունները, մասնավորապես, ենթադրում են, որ ՆԱՏՕ-ի կամ Թուրքիայի հետ առճակատման պարագայում:

Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունից արձագանքը չի ուշացել: «Ինտերֆաքսի» տեղեկացմամբ, ՌԴ պաշտպանության նախարարությունում հերքել են Հարավային Օսիայի տարածքում հակահրթիռային պաշտպանության C-300 համալիրների տեղաբաշխման մասին հայտարարությունները:

Ռուսաստանն արդեն իսկ հակահրթիռային պաշտպանության C-300 համալիրներ է տեղակայել Հարավային Օսիայում, թեեւ «վրացական կողմը չի ցանկանում աղմուկ բարձրացնել»: Ընդ որում, այս տեղեկությունը հաջորդական է արդեն իսկ քանիցս շրջանառված լուրերի, որոնց համաձայն՝ նման համալիրներ արդեն իսկ տեղակայվել են Աբխազիայում:

Ըստ վրացական լրատվամիջոցների՝ Վրաստանի արտաքին գերատեսչության ղեկավար **Գրիգոլ Վաշաձե** հայտարարել է, որ Ռուսաստանը «Վրաստանի օկուպացված տարածքներում նշված համալիրների տեղաբաշխմամբ փորձում է ուժեղացնել վերահսկողությունը ոչ միայն Աբխազիայի եւ Հարավային Օսիայի, այլեւ ողջ Կովկասի նկատմամբ:

«Աբխազիայում C-300-ի տեղաբաշխման մասին Ռուսաստանն արդեն իսկ հրապարակայնորեն է հայտարարել, բայց մենք վստահ ենք, որ նշված հրթիռները հասցվել են նաեւ Ցխինվալի շրջան», ասել է Վաշաձե: Վրաստանի արտգործնախարարի մեկնաբանությամբ, Ռուսաստանն այս կերպ Հարավային Կովկասում եռանկյուն է կազմել այդ հրթիռների տեղակայմամբ, որն, ըստ Ռուսաստանի, անհրաժեշտ կլինի

Նույն աղբյուրի համաձայն՝ Հարավային Օսիայում ներկա դրությամբ C-300 համակարգեր չկան: Ռուսաստանի պաշտպանության նախարարությունից մանրամասնել են, որ Հարավային Օսիայում ռուսական ռազմակայանի պաշտպանության հարցերը լուծվում են հակաօդային պաշտպանության միջոցներով՝ «Բուկ», «Տունգուսկա» եւ այլն:

C-300-ը զենիթահրթիռային համալիր է գործողության միջին շառավղով: 1979թ. մեկնարկած արտադրությունը մատուցում է համալիրների նորացված մոդելներ: Այս համալիրները հիմնականում խոշոր արդյունաբերական, վարչական օբյեկտները, ռազմակայանները հակառակորդի օդային եւ տիեզերական հարձակումներից պաշտպանելու համար են: Այս համալիրները բալիստիկ եւ օդային թիրախների բացահայտման գործառույթ ունեն, կարող են հարձակվել եւ վնասազերծել գետնին տեղակայված թիրախներ նախապես ճշգրտված կոորդինատների միջոցով: C-300-ը աշխարհում առաջին բազմափող զենիթահրթիռային համալիրն է, որ կարող է արձակել 12 հրթիռ՝ 6 թիրախների ուղղությամբ:

Ա.ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսրայելի պետական դպրոցներում պարտադիր կդասավանդվի արաբերեն

Իսրայելի իշխանությունները մտցնում են նոր համակարգ. երկրի պետական դպրոցներում արաբերենի դասավանդումը պետք է դառնա պարտադիր:

Ծրագիրը սկզբում կիրառվելու է Իսրայելի հյուսիսում գտնվող 170 դպրոցներում: 5-րդ դասարանից սկսած արաբերենի դասերը դառնալու են պարտադիր:

Կրթության նախարարության ներկայացուցիչները հույս ունեն, որ լեզուն կդառնա հրեաներին եւ արաբներին միացնող յուրօրինակ մշակութային կամուրջ, որը կընդլայնի փոխադարձ հանդուրժողականությունը:

Ներկայումս իսրայելական դպրոցների արաբ աշակերտները պարտադիր սովորում են իվրիտ, մինչդեռ նրանց հրեա համադասարանցիները արաբերեն կարող են սովորել ըստ նախասիրության, նշում է BBC-ն: Սակայն վերջերս ավելանում է ավարտական քննությունների համար արաբերեն սովորել ցանկացող հրեա երեխաների թիվը, ուստի իշխանությունները որոշել են վերանայել միջնակարգ դպրոցի ծրագիրը:

Արաբերենը Իսրայելի երկու պաշտոնական լեզուներից մեկն է: Կրթության նախարարության արաբական եւ իսլամական կրթության բաժնի վարիչ Շլոմո Ալոնը «Հաարեց» թերթին տված հարցազրույցում ասել է, որ դպրոցներում արաբերենի ընդամենը 1000 ուսուցիչ կա, ըստ որում նրանց մեծ մասը հրեաներ են:

«Պետությունը պաշտպանում է իր քաղաքացիների կատարյալ իրավահավասարության գաղափարը», ընդգծել է պաշտոնյան:

AZG NEW PDF.qxd 25/08/2010 21:22 Page 1

Վենետիկի հայագիտական ամառային դասընթացը՝ արդէն քառորդ դար

Օգոստոսի 3-19-ը Վենետիկում տեղի ունեցան հայոց լեզուի եւ մշակոյթի ամառային խստացեալ հերթական՝ 25-րդ դասընթացները: Իր քառորդ դարը բոլորած այս դասընթացներն արդիւնք են Վենետիկի պետական Կա Ֆոսկարի համալսարանի հայագիտական ամբիոնի վարիչ պրոֆեսոր հայր Լեւոն Զէֆիեանի եւ նրա հիմնուած «Պո-Արախ» մշակութային ընկերակցութեան շարունակական գործունէութեան եւ անխոնջ ջանքերի:

Սոյն աննախադէպ դասընթացը ներշնչող գաղափարախօսութիւնը արեւմտահայ լեզուի եւ մշակոյթի փոխանցումն է նախեւառաջ սփիւռքահայ նոր եւ նորագոյն սերունդներին, որոնք յաճախ կորցրել են այդ ազգային արժէքները: Սակայն փոքր չէ թիւը նաեւ դասընթացին հաճախած ոչ հայորդիների, որոնց մի մասը դարձել են գիտնական հայագէտներ:

Քսանչորս տարիների ընթացքում՝ 1986-2010 թուականներին Վենետիկեան դասընթացին հետեւել են մօտաւորապէս 880 հոգի, որոնցից աւելի քան երեք քառորդը՝ հայորդիներ: Վերջին տարիներին զգալի թուով ընթացորդներ են եկել նաեւ Հայաստանից՝ խորացնելու իրենց ծանօթութիւնը գրաբարի, արեւմտահայերէնի եւ արդի սփիւռքահայ գրականութեան եւ արուեստի բնագաւառներում: Դասընթացը բաժանուած է չորս մակարդակների՝ հայոց լեզուին բացարձակ անտեղեակներից մինչեւ քաջատեղեակները: Երեք շաբաթ տեւող դասընթացներում, վաթսունհինգ դասաժամերի ընթացքում տարբեր երկրներից ժամանած մասնակիցները սանում են հայերէնի եւ հայոց պատմութեան ու մշակոյթի վերաբերեալ իրենց նախնական եւ հիմնարար գիտելիքները: Իսկ դասընթացի ուսուցչական կազմը ներառում է մասնագէտներ տարբեր երկրներից: Այս տարուայ ուսուցիչներն էին դասընթացի երկարամեայ դասաւանդողներ Պարէս Մանօքը (Ֆրանսիա), Ռաֆֆի Սէթեանը (ԱՄՆ), Սալբի Գասպարեանը (Սիրիա), Ռոզին Թաշճեանը (Ֆրանսիա), ինչպէս նաեւ Արծուի Բախչինեանը, Արմինէ Մելքոնեանը (Հայաստան), Բէնէդէտտա Կօնտինը, Վարդան Կարապետեանը (Իտալիա), Սօսի Սուսանեանը (Հունգարիա) եւ Վարդգէս Պարսումեանը (Սիրիա):

Այս տարի դասընթացներին հետեւեցին 50 ընթացորդներ: Առաջին անգամ սփիւռքահայ մի դպրոց՝ ի դէմս Թորոնթոյի Քոլոլեան վարժարանի, իր աւարտական դասարանի 10 լաւագոյն աշակերտների բերել էր մասնակցելու դասընթացին: Նաեւ միանգամայն ուրախալի ներկայութիւն էր առաջին անգամ Սուրբ Ղազարի մայրավանքի հինգ նորընծաների (Հայաստանից եւ Ջաւախքից) մասնակցութիւնը դասընթացին:

Ինչպես միշտ, դասերից բացի մասնակիցների համար եւ նրանց կազմակերպմամբ տեղի էին ունենում զանազան միջոցառումներ՝ դասախօսութիւններ տարբեր թեմաներով, շարժանկարների դիտումներ, գեղարուեստական երեկոներ: Գեղեցիկ աւանդոյթ է դարձել Աստուածամօր վերափոխման օրին Մխիթարեան հայրերի կողմից դասընթացի մասնակիցների հիւրընկալումը Սուրբ Ղազար կղզում: Այս տարի այդ օրը դասընթացի ուսուցիչներից եւ ուսանողներից կազմուած երգչախումբը Սուրբ Ղազարի Մայրավանքում հանդէս եկաւ փոքրիկ համերգով: Իսկ օգոստոսի 13-ին Մուրադ-Ռափայէլեան վարժարանի շէնքում տեղի ունեցաւ խանհինգ ամեակի ոգեկոչման պաշտօնական արարողութիւնը: Հայր Լեւոն Զէֆիեանը ամփոփ ձեւով ներկայացրեց իր «զաւակի»՝ վենետիկեան հայագիտական դասընթացի անցած ուղին եւ նրա ձեռքբերումները: Այնուհետեւ ընթերցուեցին շնորհաւորական նամակներ եւ ուղերձներ Հայաստանի եւ Սփիւռքի տարբեր կառոյցներից (ՀՀ Սահմանադրական դատարան, Մշակոյթի նախարարութիւն, Սփիւռքի նախարարութիւն, Գիտութիւնների ազգային ակադեմիա, Գրականութեան եւ արուեստի թանգարան, Գրողների միութիւն եւ այլն): Դասընթացի վերաբերեալ իր գնահատական խօսքն ասաց Հայաստանից յատուկ հրաւիրուած ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, պրոֆեսոր Վլադիմիր Բարխուդարեանը: Միջոցառման հիւր բանախօսն էր մանկավարժ, հայոց լեզուի դասագրքերի հեղինակ Յարութիւն Քիւրքչեանը Աթէնքից, որը հայերէնով եւ ֆրանսերէնով խօսեց արդի պայմաններում Սփիւռքում հայոց լեզուի մարտահրաւէրների եւ պահպանութեան վերաբերեալ: «Հայոց լեզուն մանուկի կը նմանի, եթէ չսնանենք զայն՝ կը մեռանի», ասաց նա: Պաշտօնական մասին յետեւեց գեղարուեստական յայտագիրը, որին մասնակցում էին դաշնակահարուհի Լորանս-Անահիտ Մխիթարեանը (Բրիւսէլ), սոպրանօ Ռոզին Թաշճեանը եւ բարիտոն Մկրտիչ Մկրտչեանը (Փարիզ)՝ իտալացի դաշնակահարուհի Ժյուստին Ռաղաչոլլիի նուագակցութեամբ:

Նշենք նաեւ, որ Վենետիկի ամառային խստացեալ դասընթացի 25-ամեակի վերաբերեալ լոյս է տեսել «Պո-Արախ» մշակութային ընկերակցութիւնը եւ իր քանչորսամեայ գործունէութիւնը. 1987-2010» վերնագրով ամփոփագիրը՝ հայերէն, իտալերէն, անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով, ինչպէս նաեւ դասընթացի երկրորդ Յուշամատեանը, որտեղ ամփոփուած են անցած հինգ տարիների ընթացքում դասընթացի վերաբերեալ մամուլում լոյս տեսած յօդուածներ եւ հարցազրոյցներ՝ հայերէն, ֆրանսերէն, իտալերէն, ռուսերէն, իսպաներէն, գերմաներէն, ռումիներէն եւ հունգարերէն լեզուներով:

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ
Վենետիկ-Երեւան

Քարտաշ Օննիկի նոր գրքի շնորհանդէսը Գլենդէյլում

Գլենդէյլի (Լոս Անջելէս) Իսթ Բրոդուէյ, 415 հասցեում գտնվող «Ապրիլ» գրախանութում վերջերս տեղի է ունեցել Քարտաշ Օննիկի վերջին՝ «Ազատագրում ազատությունից» (Liberation from Freedom) գրքի շնորհանդեսը, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթը:

Նյու Յորքի Հադսոն Վելլի շրջանի բնակիչ Քարտաշ Օննիկը ճանաչված քանդակագործ է, խաղալիքներ պատրաստող, գրքերի հեղինակ եւ քաղաքական գործիչ: 1960-ականների վերջերին սահմանափակելով իր գործունեությունը զանգվածային հաղորդակցությունների զարգացման ասպարեզում, նա թողնում է կորպորատիվ աշխարհը եւ Ափսթեյթ Նյու Յորք տեղափոխվելով, իրեն նվիրում քանդակագործությանը, ուսուցչությանը եւ քաղաքական տարբեր հակամարտությունների շուրջ մարդկանց իրազեկությունը բարձրացնելու գործին: Նրան է պատկանում «Գազայի շրջանի վերածննդի ծրագիրը», որի շրջանակներում, ի պատասխան իսրայելական նվաճողական քաղաքականության եւ վայրագություններին, նա աշխարհի տարբեր անկյուններից 50 արվեստագետների (նկարիչներ, քանդակագործներ) համագործակցությամբ արտասովոր մի ներկայացում է «բեմականացրել»՝ իրենց պատրաստած մարմնամանդակները հանդիսավոր պայմաններում այրելով:

«Մեր ձեռքերով ստեղծածը ոչնչացնելը խորհրդանշում է այն կորուստն ու ցավը, որ Գազայի բնակիչներն են զգացել՝ տեսնելով իրենց արարումների կործանումը», գրում է նա իր գրքում, որի վերջաբանում խոստովանում է, որ «սա իմ վերջին ջանքն է եւ ես ձեռքերս լվանում եմ բոլոր տեսակի «իզմերից», բոլոր հավատամքի համակարգերից, սուրբ գրքերից, մանիֆեստներից եւ քարոզչական մեխանիզմներից, որոնք համայնքային ատելություն, ցեղային գերադասություն եւ կայսերական ամբարտավանություն են տարածում»:

Գրքի արժեւորման գնահատականներում նշվում է, որ դա մասամբ ինքնակենսագրական, մասամբ էլ՝ փիլիսոփայական տրակտատի ձեւով է գրված՝ կրքոտ, հուզական, գունեղ եւ հիմնականում մետրիկ ոճով:

«Համոզված եմ, որ գիրքը արձագանք է գտնելու բոլոր նրանց շրջանում, ովքեր դեռեւս կասկածում են, որ մեր, այսպես կոչված, ղեկավարների ամենօրյա հրամցրած «անասնակերը» ամբողջովին բաղկացած է ստերից, որոնք նպատակ ունեն հարատեւ վախի, անհանդուրժողության եւ կեղծ անվտանգության մեջ պահելու մարդկանց», նշել է Քարտաշ Օննիկը շնորհանդեսի ժամանակ, ավելացնելով. «Ամենից շատ ցանկանում եմ, որ մարդիկ սթափվեն, զարթնեն սպառողի, շռայլողի պարտադրված թմբիրից եւ աշխարհի ու բնության դեմ գնալու մտածելակերպից թեւակոխեն դրանց ընձեռած հնարավորություններին ընդառաջ գնալու մտածելակերպը: Միայն այդ դեպքում մենք կկարողանանք բաց լինել բոլորի առաջ եւ մեր մեջ ուժ կգտնենք լուծելու մեր մոլորակի գլխավոր խնդիրները»:

Անցած ավելի քան քառասուն տարիների գործունեությունը ամփոփելով, նա հպարտությամբ մատնանշել է իր վրա անջնջելի տպավորություն թողած այնպիսի «լուսավորիչների» անունները, ինչպիսիք են Կրիշնամուրտին, Թորոն, Բրանկուսին, Ռաուլ Հեյգը եւ Մքլուհանը:

Հ. Ծ.

Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Կուլիսների ետեւում հաղնում է հայերի դեմ գործված ցեղասպանության Վաշինգտոնի թանգարանը

Ստորեւ հատվածաբար ներկայացնում ենք Լիդիա դը Պիլիսի «Վաշինգտոն սիթի փեյփր» օրաթերթում տպագրված հոդվածը, որն արտատպված է «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի հուլիսի 17-ի համարում:

Ծրագրի իրականացումը շատ դանդաղ է ընթանում: Մի քանի շաբաթ առաջ լուր ստացվեց, որ կազմակերպությունը չի վճարել սեփականության հարկերը: Հիմա այդ հարցը լուծված է, սակայն մի նախկին նվիրատուի կազմակերպության (*) դեմ բացած դատավարությունը դեռ ընթացքի մեջ է եւ խոչընդոտում է, որ թանգարանի բացման կոնկրետ օր նշանակվի: Թանգարանի գործադիր հանձնաժողովի նախագահ Վան Գրիգորյանը հույս ունի, որ մինչեւ տարեվերջ դատական նոր լսումներ կնշանակվեն եւ խնդիրն իր վերջնական լուծումը կստանա:

Մյուս կողմից, թանգարանի կահավորման ջանքերի «մատեստրն»՝ **Ռուբեն Ադալյանը** հետեւում է, թե գործերն ինչպես են առաջ գնում:

Ադալյանը պատմաբան է, տասնյակ տարիների ընթացքում նա բազմաթիվ հարցազրույցներ է անցկացրել վերապրողների հետ եւ օրեր շարունակ ցեղասպանական հարցերի շուրջ խորհրդակցելով բնականաբար չափազանց լուրջ է, հազվադեպ է ծիծաղում եւ խոսում է շատ հանգիստ ու ցածր ձայնով, հայացքն ուղղած ներքեւ:

Թանգարանը պատմելու է հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը: Այցելուները շենքից ներս են մտնելու եւ հերթով բարձրանալու հարկերը մինչեւ հասնեն բարձրակետին՝ առանց պատուհան-

Վաշինգտոնի սրտում նախկին «Ամերիկայի ազգային բանկի» այս շենքը մոտիկ ապագայում կընդունի Ցեղասպանության թանգարանի այցելուներին

ների, անհարթ, տեղ-տեղ ճեղքվածքներով պատված որմնաքանդակներով հարուստ, ակնածանք ներշնչող դահլիճը:

«Չես կարող հարթ պատն օգտագործել ցույց տալու համար, թե ինչպես քարուքանդ եղավ մի ամբողջ քաղաքակրթություն», նշում է Ադալյանը:

Բայց թանգարանն ունենալու է նաեւ «Միջոցներ ձեռք առնելու կենտրոն», որտեղ լուսաբանվելու



Հայոց ցեղասպանության շենքի մակետը:

«Եթե սոսկ արվեստի հավաքածուի համար ցուցադրման հարմար վայր փնտրելու լինենք, ամեն ինչ շատ ավելի հեշտ կլիներ», ասում է նա եւ հավելում. «Ինչեւէ, որոշ աշխատանքներ այդուհանդերձ կատարված են: Երիտասարդ աշխատողների մի խումբ արխիվային նյութերն ու փաստաթղթերն է դասակարգում, մի ուրիշ խումբ հայկական սփյուռքի ամենահեռավոր անկյուններից ձեռք բերված իրերը, գրքերն ու տեսաերիզներն է կարգի բերում եւ դասավորում համապատասխան դահլիճում: Այս երկրի ժողովուրդը մեզ օգնության ձեռք մեկնեց այս ծանր տարիներին, այնպես որ թանգարանի մուտքը ձրի է լինելու ի նշան մեր երախտագիտության»:

«Հայոց ցեղասպանության թանգարանի այս ամենը մոտիկ ապագայում կընդունի ամենատարբեր ազգությունների, դավանանքների, գաղափարների եւ հասակի մարդկանց: Ամենուրեք, որտեղ ես գնում եմ, մարդիկ ասում են, թե ինչ հրաշալի գաղափար է, ինչ հրաշալի գաղափար է

AZG NEW PDF.qxd 25/08/2010 21:38 Page 1

Կվիճարկեն ՀՀ վարչապետի գավաթը

Ֆրանսահայ հանդբոլիստները կհամալրեն ՀՀ հավաքականի կազմը

Սեպտեմբերի 1-5-ը Վանաձորում կանցկացվի ՀՀ վարչապետի գավաթի խաղարկության հանդբոլի միջազգային 2-րդ մրցաշարը, որին կմասնակցեն Հայաստանի, Իրանի, Բելառուսի եւ Վրաստանի տղամարդկանց հավաքականները: Այս մրցաշարի անցկացման հիմքը դրվել է անցյալ տարի: Մրցաշարն անցկացվեց Երեւանի «Դինամո» մարզասրահում Հայաստանի, Վրաստանի եւ Իրանի հանդբոլիստների մասնակցությամբ:

Ինչպես տեղեկացանք հանդբոլի հանրապետական ֆեդերացիայի մամուլի ծառայությունից, մրցաշարին ներկա կգտնվեն բարձրաստիճան մի շարք հյուրեր ինչպես միջազգային ֆեդերացիայից, այնպես էլ մասնակից երկրներից: Հայաստանի հանդբոլի ֆեդերացիան ամեն ջանք գործադրել է մրցաշարը պատշաճ մակարդակով անցկացնելու համար: Աշխատանքների իրականացման իսկողությունը ստանձնել է ֆեդերացիայի նախագահ Սարգիս Գրիգորյանը: Կազմկոմիտեն գլխավորում է ֆեդերացիայի փոխնախագահ, ֆիզկուլտուրայի հայկական պետական ինստիտուտի մարզական խաղերի ամբիոնի վարիչ Հարություն Մելքոնյանը: Մրցաշարի գլխավոր մրցավարն է Ալեքսանդր Արեւշատյանը:

Հաղթող թիմը կպարգեւատրվի շքեղ գավաթով ու ոսկե մեդալներով: Մրցանակակիրները եւս մեդալներ կստանան:

Սպասվում է բավական հետաքրքրական ու համառ մրցակցություն գլխավոր մրցանակի համար պայքարում: Մեր մրցակիցները բավական ուժեղ են, ուստի Հայաստանի հավաքականը պետք է ձգտի պատվով դուրս գալ դժվարին փորձությունից:

Հավաքականի կազմն ուժեղացնելու նպատակով Ֆրանսիայի ակումբներից հրավիրվել են ֆրանսահայ հանդբոլիստներ: Այդ նպատակով ֆեդերացիայի նախագահ Սարգիս Գրիգորյանը եւ փոխնախագահ Հարությունը Մելքոնյանը հունվարին եղել են Ֆրանսիայում, հետեւել հայ լավագույն հանդբոլիստների ելույթներին եւ ընտրություն կատարել:

Այժմ Ֆրանսիայում մարզվում եւ առաջիկա մրցաշարին են նախապատրաստվում դարպասապահ Ռեմի Սամբուլյանը, Գիրիլ Հայրապետյանը, Գիրիլ Պապիկյանը, Գուլայմե Կարմիրյանը, Մարկ Հուսիկյանը, Հրայր Սալաթյանը, Ալեքս Կումիրյանը, Օլիվյե Բրուանդը եւ Քեթրին Ռենեն: Նրանք մարզվում են մարզիչ Պատրիկ Օթամյանի գլխավորությամբ: Թիմի գործադիր տնօրենն է Պատրիկ Բոյաջյանը: Օգոստոսի 28-ին ֆրանսահայ հանդբոլիստները կժամանեն Երեւան ու կմիանան իրենց խաղընկերներին:

Իսկ այս օրերին ֆիզկուլտուրայի ինստիտուտի մարզադահլիճում հավաքականի գլխավոր մարզիչ Էդիկ Օհանյանի գլխավորությամբ մրցաշարին են նախապատրաստվում դարպասապահ Արսակ Բայրամյանը, Արման Իսրայելյանը, Հովհաննես Մուրադյանը, Հայկ Երանոսյանը, Վահան Դարբինյանը, Ստեփան Մարգարյանը, Գոռ Ղանադյանը, Ֆրունզե Ղուկասյանը եւ Ստեփան Ղազարյանը: Նշենք, որ 35-ամյա մարզիչը հավաքականը մարզել է 2001-2008-ին: Իսկ որպես գործող մարզիկ նա ժամանակին հանդես է եկել Հայաստանի ազգային հավաքականում: Համաստեղ մարզումներից հետո մարզիչը կհրապարակի հավաքականի վերջնական կազմը, որն էլ կմասնակցի մրցաշարին: Հուսանք, որ մեր հանդբոլիստներն իրենց ելույթներով կուրախացնեն երկրպագուներին:

«Պարտիզանի» մեծ հաջողությունը

Հայտնի դարձան ֆուտբոլի չեմպիոնների լիգայի որակավորման 4-րդ փուլի արգելքը հաղթահարած առաջին 5 թիմերը, որոնք իրավունք ստացան մասնակցելու խմբային մրցաշարին:

Մեծ հաջողության հասավ «Փյունիկի» նախկին մրցակից Բելգրադի «Պարտիզանը»: Բելգրադում «Անդերլեխտի» հետ առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի (2-2): Պատասխան խաղը սկզբում շատ հաջող դասավորվեց «Պարտիզանի» համար: Բրազիլացի Կլեոյի խփած 2 գոլերի շնորհիվ «Պարտիզանը» մինչեւ 64-րդ րոպեն հաղթում էր 2-0 հաշվով: Սակայն դաշտի տերերին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Աչքի ընկան Լուկակուն եւ Ժիլեն: Լրացուցիչ ժամանակում հաշիվը չփոխվեց եւ հաղթողին որոշելու համար հարկ եղավ 11 մ հարվածներ իրացնել: Ավելի դիպուկ գտնվեցին «Պարտիզանի» ֆուտբոլիստները, որոնք էլ մտան խմբային մրցաշարի մասնակիցների շարքը:

Մեծ անակնկալ էր սեփական հարկի տակ իսպանական «Սեւիլիայի» պարտությունը պորտուգալական «Բրագայից» (3-4): Առաջին խաղում էլ «Բրագան» սեփական հարկի տակ 1-0 հաշվով հաղթել էր:

Ավստրիական «Զալցբուրգին» չհաջողվեց հյուրընկալվելիս Թել Ավիվի «Հապոելից» ռեւանշ վերցնել առաջին խաղում կրած պարտության դիմաց (2-3): 42-րդ րոպեին Դուգլասը գնդակն ուղարկեց սեփական դարպասը եւ «Զալցբուրգը» հաշվի մեջ առաջ անցավ: Հաջորդ փուլ դուրս գալու համար ավստրիացիներին եւս մեկ գոլ էր անհրաժեշտ: Սակայն խաղի ավելացված ժամանակում գնդակը հայտնվեց «Զալցբուրգի» դարպասում (1-1): Այդ խաղում խոակին Պողոսյանը «Զալցբուրգի» կազմում փոխարինման մտավ 74-րդ րոպեին:

Լրացուցիչ ժամանակ պահանջվեց նաեւ «Սամպդորիա»-«Վերդեր» մրցախաղում: Իտալիայում «Վերդերը» 3-1 հաշվով վստահ հաղթանակ էր տոնել ու թվում էր, թե սեփական հարկի տակ ոչ մի դժվարության չի հանդիպի: Սակայն արդեն առաջին 13 րոպեներին իտալացի Պացինին 2 անգամ գրավեց «Վերդերի» դարպասապահ Թիմ Վիզեի պաշտպանած դարպասը: 85-րդ րոպեին Կասանոն 3-րդ գոլը խփեց, ինչը կարող էր «Սամպդորիային» ուղեգիր պարգեւել: Սակայն ավելացված ժամանակում Ռոզենբերգը կրճատեց հաշիվը (1-3) եւ հնարավորություն տվեց շարունակելու պայքարը: Լրացուցիչ ժամանակում Պիսարոն 2-րդ գոլը խփեց իտալացիների դարպասը: Թեեւ 2-3 հաշվով պարտությանը, «Վերդերը» մտավ հաջորդ փուլ:

Մոլդովական «Շերիֆը», որ առաջին խաղում հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջել էր շվեյցարական «Բազելին», սեփական հարկի տակ ավելի վաս հանդես եկավ: Մոլդովացիները 3 անպատասխան գնդակ ընդունեցին սեփական դարպասը:

ԲԿՄԱ-ն խմբային մրցաշարում

Մոսկվայի ԲԿՄԱ-ն առաջինը մտավ ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշար: Թիմի հաջողությունը կասկած չէր հարուցում, քանի որ առաջին խաղում սեփական հարկի տակ բանակայինները 4-0 հաշվով ջախջախել էին Կիպրոսի «Անորտոսիսին»:

Ճիշտ է, հյուրընկալվելիս ԲԿՄԱ-ն հայտնվել էր պարտության եզրին: 76-րդ րոպեին Կաֆուի խփած գոլի շնորհիվ «Անորտոսիսը» հաշվի մեջ առաջ անցավ: Միայն դրանից հետո կարծես բանակայինները զարթնեցին ու կարողացան խաղավերջում 2 գոլ խփել: Դումբայայի եւ Գոնսալեսի խփած գնդակները հաղթանակ պարգեւեցին ԲԿՄԱ-ին:

Համաձայնությունը կայացավ

Իսպանական «Բարսելոնի» հարձակվող Զլատան Իբրահիմովիչը «Միլանի» հետ համաձայնեցրել է իր անձնական պայմանագիրը, որի համաձայն իտալական ակումբում տարեկան 6 մլն եվրո կստանա: Նրա աշխատավարձի մնացած մասը կվճարի «Բարսելոնը»: Իբրահիմովիչը «Միլանում» մեկ տարի հանդես կգա վարձավճարով:

ՈՂՁՈՒՆԵԼԻ ՔԱՅԼ

Տոմսերի գներն իջեցվել են

Ֆուտբոլի Հայաստանի ֆեդերացիան 2000 դրամով իջեցրել է սեպտեմբերի 3-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք Հայաստան-Իռլանդիա հանդիպման տոմսերի գները: Այժմ առեւտրյան տրիբունայի տոմսի գինը 6000 դրամ է, արեւելյանինը՝ 4000, իսկ մյուս երկու տրիբունաներինը՝ 2000 դրամ: Գնային փոփոխություն կատարելու պատճառով մի քանի օրով դադարեցվել է տոմսերի վաճառքը: Այն կվերսկսվի օգոստոսի 28-ից:

Ինչ խոսք, ֆեդերացիայի այս քայլը ողջունելի է: Հավանաբար գների իջեցման պատճառ դարձան լրատվամիջոցների բացասական արձագանքները: Մասնավորապես «Ազգն» օգոստոսի 24-ի «Տոմսերն էլ թանկացան» հրապարակման մեջ կարծիք էր հայտնել, որ տոմսերի բարձր գների պատճառով տրիբունաներում քիչ ֆուտբոլասերներ կգտնվեն, ուստի խորհուրդ էր տվել մաչելի գին սահմանել:

Armsport.am-ի Facebook-ի էջում էլ մի շարք ֆուտբոլասերներ իրենց դժգոհություններն էին արտահայտել տոմսերի բարձր գնի առիթով, նշելով, որ այդ խաղում հավանաբար իռլանդացիների թիվը գերազանցի հայերին, ինչպես դա տեղի ունեցավ «Հրազդան» մարզադաշտում կայացած Հայաստան-Իրան ընկերական հանդիպման ժամանակ, երբ պարսիկներն ավելի շատ էին մերոնցից: Նշենք, որ Հայաստանի ազգային հավաքականի մասնակցությամբ հանդիպումների տոմսերի ամենաբարձր գինը սահմանվել է 2008-ին «Հրազդանում» կայացած Հայաստան-Թուրքիա խաղի համար: Առեւտրյան տրիբունայի տոմսն արժեր 10 հազար դրամ:

Կիպկետերի ռեկորդը գերազանցվեց

Բեռլինում կայացած թեթեւ ատլետիկայի միջազգային մրցումներում ֆենիցի Դեւիդ Ռուդիշան գերազանցեց 800 մետր վազքի աշխարհի ռեկորդը: Նա մրցաշարածությունը հաղթահարեց 1.41.09 րոպեում, ինչը 0,02 վրկ-ով գերազանցում է 1997-ին հանրահայտ Ուիլսոն Կիպկետերի սահմանած համաշխարհային ռեկորդը: Դանիացի վազորդն այդ ռեկորդը եւս սահմանել էր Գերմանիայում՝ Քյոլնում: Ռուդիշան անցյալ տարի Բեռլինում կայացած թեթեւ ատլետիկայի աշխարհի առաջնությունում չի կարողացել հաղթահարել կիսաեզրափակիչի արգելքը:

Կանանց 800 մետր վազքում հաղթեց հարավաֆրիկացի Կաստեր Սեմենյան՝ ցույց տալով 1.59,95 րոպե արդյունք: Դա 4,5 վրկ-ով զիջում է անցյալ տարի աշխարհի առաջնությունում նրա ցույց տված չեմպիոնական արդյունքին: Ի դեմ, հենց առաջնության ժամանակ ցույց տված այդ արդյունքն էր պատճառը, որ շատերի մոտ մարզուհու սեռի նկատմամբ կասկածներ առաջացան: Նրա ստիպված էր գենդերային թեստի ենթարկվել: Անալիզների հանձնման ու ստուգումների պատճառով Սեմենյան 11 ամիս անգործության էր մատնված: Այդ ընթացքում թեթեւ ատլետիկայի միջազգային ֆեդերացիան ավարտեց հետազոտությունները ու թույլատրեց Սեմենյային շարունակելու ելույթները կանանց մրցաշարերում: Հարավաֆրիկացի մարզուհին իր առջեւ նպատակ է դրել հաջող հանդես գալ 2011-ի աշխարհի առաջնությունում եւ 2012-ի Լոնդոնի օլիմպիական խաղերում:

Մարդասպան մրցավարը

Բրազիլական Սեարա նահանգի իշխանությունները փնտրում են ֆուտբոլային մրցավար Ֆրանսիսկո Չավեսին, որը խաղի ժամանակ սկսված ծեծկռտուքի ընթացքում դանակով սպանել էր ֆուտբոլիստներից մեկին:

Ողբերգական այդ միջադեպը տեղի էր ունեցել սիրողական երկու թիմերի՝ «Ռեդենսաոյի» եւ «Բոա-Ֆեի» մրցախաղում: Խաղային դրվագներից մեկում մրցավարը խաղի կանոնների խախտում արձանագրեց դաշտի տերերի դեմ: «Բոա-Ֆե» թիմի խաղացող Ֆրանսիսկո դա Սիլվան ոտքով հարվածեց մրցավարին եւ խաղադաշտում ծեծկռտուք սկսվեց, որի ժամանակ մրցավարը դանակով մահացու հարված հասցրեց Ֆրանսիսկոյի եղբորը՝ Ժոզե դա Սիլվային:

Վերջին խաղում էլ պարտվեցին

Ֆուտբոլի Հայաստանի կանանց հավաքականը 2011թ. աշխարհի առաջնության ընտրական մրցաշարի ավարտական խաղում էլ պարտվեց՝ «Միկա» մարզադաշտում 0-3 հաշվով զիջելով պորտուգալացիներին: Հյուրերից 2 գոլ խփեց Դոլորես Սիլվան, մեկ անգամ աչքի ընկավ Կարոլե Կոշան: Մեր աղջիկները բոլոր 8 խաղերում էլ պարտվեցին ընդհանուր 1-42 հաշվով ու 5 թիմերի մրցավեճում եզրափակեցին աղյուսակը:

Նրանք կընդգրկվեն փառքի սրահում

Ռուսաստանցի բասկետբոլիստուհի Նատալյա Զասուլսկայան, լիտվացի բասկետբոլիստ Արվիդաս Սաբոնիսը (նկարում) եւ ռուսաստանցի հանրահայտ մարզիչ Եվգենի Գոմելսկին կընդգրկվեն բասկետբոլի միջազգային ֆեդերացիայի փառքի սրահում: Հանդիսավոր այդ արարողությունը տեղի կունենա սեպտեմբերի 12-ին, Ստամբուլում, բասկետբոլի աշխարհի առաջնության ժամանակ:

Զասուլսկայան 1988-ի Սեուլի օլիմպիադայի չեմպիոնուհի է, 1992-ի Բարսելոնի օլիմպիական խաղերի բրոնզե մրցանակակիր: Նա նաեւ Եվրոպայի եռակի չեմպիոնուհի է, աշխարհի փոխչեմպիոնուհի, ԽՍՀՄ եւ Ռուսաստանի չեմպիոնուհի: 1992-1995-ին նա ճանաչվել է Եվրոպայի լավագույն բասկետբոլիստուհի:

Եվգենի Գոմելսկուն Ռուսաստանում անվանում են կանանց բասկետբոլի թիվ 1 մարզիչ: 1992-ին ՌԴ հավաքականը նրա գլխավորությամբ Բարսելոնի օլիմպիադայի չեմպիոն հռչակվեց: Նրա որդի հավաքականը նաեւ չեմպիոնի տիտղոսին է արժանացել աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում:

Արվիդաս Սաբոնիսը ԽՍՀՄ հավաքականի կազմում 1982-ին հռչակվել է աշխարհի չեմպիոն, իսկ 1988-ին՝ Սեուլի օլիմպիադայի ոսկե մեդալակիր: 1992-ին եւ 1996-ին Լիտվայի հավաքականի կենտրոնականը օլիմպիական խաղերի բրոնզե մրցանակակիր է դարձել: Նա հանդես է եկել «Ժալգիրիսում», իսպանական «Վալյադոլիդում» ու «Ռեալում»: Վերջինիս կազմում Սաբոնիսը դարձել է եվրոլիգայի հաղթող: 1995-ին Սաբոնիսը սկսեց հանդես գալ ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցության «Պորտլենդում»:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

AZG NEW PDF.qxd 25/08/2010 22:02 Page 1

Եվրոդատարանի լումները կարող են դառը հետեւանքներ ունենալ

Վերջին տարիներին ամերիկահայերը մի շարք դասական հարցեր են ներկայացրել Մ. Նահանգների դատարաններում ընդդեմ որոշ ապահովագրական ընկերությունների, բանկերի եւ անգամ Թուրքիայի Հանրապետության՝ ակնկալելով փոխհատուցում ստանալ 1915-ի ցեղասպանության հետեւանքով կրած կորուստների դիմաց:

Սեպտեմբերի 15-ին առաջին անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը լսումներ է անցկացնելու՝ ընդդեմ Ադրբեջանի Հանրապետության հայազգի մի ընտանիքի բողոքի վերաբերյալ: Ընտանիքը հսկայական կորուստներ է ունեցել ղարաբաղյան հակամարտության օրերին: Հատկանշական է, որ նույն օրը Եվրոդատարանը լսումներ է անցկացնելու ազերիների կողմից (Շիրագով եւ ուրիշներ) Հայաստանի Հանրապետության դեմ բացված դատի շուրջը:

Արցախի հյուսիսի Շահումյան շրջանի Գյուլիստան ավանի նախկին բնակիչ Մինաս Սարգսյանը 2006-ի օգոստոսի 11-ին հայց է հարուցել իր տան ավերման եւ իր կալվածքներից վտարման վերաբերյալ: Նա նշել է, որ հավանաբար մի ազերի այժմ ապրում է իր սեփական տանը: Եվ չնայած Սարգսյանը մի տարի առաջ մահացել է, նրա այրին եւ երկու զավակները շարունակում են հետամուտ լինել դատական գործին:

Նրանց դատարանում ներկայացնում են դատապաշտպաններ Նարինե Գասպարյանն ու Քնարիկ Օհանյանը՝ Երեւանի «Լիգալ գայդ» ոչ կառավարական կազմակերպությունից, ինչպես նաեւ մարդու իրավունքների ճանաչված փաստաբան պրոֆ. Ֆիլիպ Լիչը՝ Լոնդոնում գործող Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոնից: Շահումյանի շրջանը գտնվում է նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի հյուսիսային սահմանում: Դրա բնակչության ավելի քան 80 տոկոսը հայեր էին նախքան արցախյան հակամարտությունը: 1992-ի հունիսին, երբ ադրբեջանական ուժերը ռմբակոծեցին Գյուլիստանը, Սարգսյանների 2-հարկանի տունը քանդվեց: Ռմբակոծությունների հետեւանքով ամբողջ բնակչությունը լքեց ավանը:

Սարգսյանի հայցը հիմնված է այն փաստերի վրա, որ նա, կորցնելով իր կալվածքը, չի կարող խաղաղորեն օգտվել դրանից, որ բռնի վտարվել է իր բնակավայրից, եւ Ադրբեջանը շարունակում է մերժել իր ունեցվածքին տիրանալու փորձերը, որ քանդված գերեզմանների թվում են եղել նաեւ իր մոտիկ ազգականների հողաթմբերը, որոնց այցելությունից զրկվել է, որ Ադրբեջանում հնարավոր չէ արդյունավետ պաշտպանություն ստանալ իրենց պահանջներին, եւ որ նա խստական վերաբերմունքի է ենթարկվել Ադրբեջանում իր էթնիկական եւ կրոնական պատկանելության պատճառով: Միայն Ադրբեջանում ապրող հայերն են ենթարկվել բռնությունների եւ ջարդերի:

Սա առաջին հայկական հայցն է, որ ներկայացվում է Եվրոդատարան այլ ոճրագործությունների շարքում նաեւ սեփականության իրավունքների խախտման վերաբերյալ: Եթե հաջող ավարտ ունենա, լավ նախադեպ է դառնալու հարյուրհազարավոր ուրիշ հայերի համար, որոնք Բաքվում եւ Ադրբեջանի այլ քաղաքներում հարկադրված կորցրեցին իրենց ունեցվածքը:

Նույնը կարելի է ասել նաեւ Հայաստանի դեմ ներկայացված Շիրագովի եւ մյուսների հայցի մասին: Տարբերությունը, սակայն, այն է, որ ազերիները իրենց ցանկությամբ լքեցին ու հեռացան Հայաստանից եւ իրենց ունեցվածքն էլ վաճառեցին նախքան հեռանալը:

Պատահականություն չի կարող լինել, որ երկու կողմերի դեմ հարուցված հայցերը քննարկվելու են միեւնույն օրը: Եթե դատարանը սեփականության իրավունքների խախտման փաստեր արձանագրի եւ դրամական փոխհատուցումներ նշանակի, հետեւանքները վաս են լինելու երկու երկրների տնտեսությունների համար: Իսկ եթե դրա փոխարեն դատարանը լիազորի երկրներին՝ ընդունելու իրենց նախկին քաղաքացիներին եւ վերադարձնելու նրանց սեփականությունները, ապա դարձյալ վաս է լինելու, քանի որ նոր ցնցումների առիթ է տրվելու տարածաշրջանում:

Որպես Եվրոխորհրդի անդամ երկրներ՝ Հայաստանն ու Ադրբեջանը պարտավոր են կատարել դատարանի որոշումը, ինչ էլ որ լինի:

Երկու լսումներին էլ կարելի է հետեւել սեպտեմբերի 15-ին՝ դատարանի www.echr.coe.int/echr կայքը մուտք գործելով: Ազերիների հայցը հեռարձակվելու է առավոտյան 9:15-ին, իսկ հայերի հայցը՝ ժամը 14.30-ին (երկուսն էլ Ֆրանսիայի ժամանակով):

ՀԱԲՈՒԹ ՍԱՍՈՒՆՅԱՆ
«Կալիֆորնիա կուրիեր»
Թարգմ. Հ. Ծ.

Եկեղեցում մատուցված պատարագն անգամ դիտարկվում է որպես Թուրքիայի մասնատման սպառնալիք

1-ին էջից

Մինչ Էրդողանի կառավարությունը շահարկում էր Սումելա վանքում 88 տարվա ընդմիջումից հետո մատուցված պատարագը, ցույց տալով Արեւմուտքին, մասնավորապես Եվրոմիությանը, թե Թուրքիան բարելավել է երկրի ազգային փոքրամասնությունների նկատմամբ որդեգրած դիրքորոշումը, ահա ասպարեզ են իջնում ազգայնամոլ շրջանակները, իթթիհատականների իրավաժառանգորդ ֆեմալական ազգայնականների հետ սկսում են մեղադրել վարչապետ Էրդողանին, թե Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ ոչ մի կառավարություն չի ունեցել եկեղեցի բացելու այնպիսի հակում, ինչպիսին նրա կառավարությունը, դա երկիրը կանգնեցնում է քրիստոնեացման սպառնալիքի առջեւ եւ նախադրյալներ է ստեղծում, որ հույները վերաբնակեցնեն Տրապիզոնը, վերականգնելու համար Պոնտոսի կայսրությունը, իսկ հայերը «Հայաստան դարձնեն Վանը եւ շրջակայքը»:

Եթե Սումելա վանքում կամ Աղթամարի Սուրբ Խաչում մատուցվող պատարագը որպես մասնատման սպառնալիք է դիտարկվում Թուրքիայի համար, կամ դիտարկողները տառապում են Էրդողանի կառավարությանը մեղադրելու մոլուցքով, կամ ընդգծված ատելություն ունեն հայերի եւ հույների նկատմամբ, որոնց գրեթե իսպառ բնաջնջել էին 1915-23 թթ., կա՛մ հիվանդոտ երեւակայության տեր են, կա՛մ էլ ի սկզբանե խախուտ են եղել այլ ժողովուրդների պատմական հայենիքի վրա ֆեմալականների ստեղծած թուրքական ազգային պետության հիմքերը:

Հիվանդոտ երեւակայությունը հանցագործի հոգեբանության արդյունքն է, որը պայմանավորված է հայերի եւ հույների ցեղասպանությանը թուրքական ժողովրդական զանգվածների անմիջական մասնակցությամբ: Ինչ վերաբերում է այլ ժողովուրդների պատմական հայրենիքի վրա թուրքական ազգային պետության ստեղծմանը, ապա այս փաստի գիտակցումն էլ թերարժեքության բարդույթ է առաջացնում ինչպես թուրք ազգայնամոլների, այնպես էլ ֆեմալական ազգայնականների մեջ, որ նրանք այդ բարդույթով տարվա ընթացքում մեկ օր մի քանի ժամով եկեղեցում պատարագի մատուցման մեջ անգամ կարողանում են տեսնել Տրապիզոնում հունական, իսկ Վանում՝ հայկական պետականության վերականգնումը:

Ըստ երեւույթին թուրք ազգայնամոլներն ու ֆեմալական ազգայնականները, բացի հանցագործի հոգեբանությունից, տառապում են նաեւ «Թուրքիայի մասնատման» բարդույթով: Ժողովուրդն իզուր չի ասել՝ «Գող՝ սիրտը դող»: Խնդիրը, սակայն, սոսկ հանցագործի հոգեբանությունը կամ թերարժեքության բարդույթը չէ, այլ Տրապիզոնում եւ Վանում հույների եւ հայերի երբեմնի գոյության մասին Սումելա վանքի ու Աղթամարի Սուրբ Խաչի արթնացրած հուշերն են, ինչպես նաեւ նրանց ներկայիս բացակայության համար բացատրություն պահանջող աղաղակող հարցը. «Եթե նրանք 1915-23 թթ.-ին չեն ենթարկվել ցեղասպանության, ապա ի՞նչ է կատարվել նրանց հետ, որ այսօր չկան»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
Սեմինարներ եւ խորհրդատվություն
ղեկավարների եւ մասնագետների համար
«ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ» ԿԵՆՏՐՈՆ,
Բաղրամյան 24դ, 54-24-81, 54-74-81

ՄԵՐ ՏՊԱԾԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Հարուցվել է քրեական գործ «Գեղամա» ռեստորանում թունավորման առնչությամբ

«Ազգը» իր ընթերցողներին տեղեկացրել էր օգոստոսի 19-ին Երեւանի Հրազդանի կիրճում գտնվող «Գեղամա» ռեստորանում հարսանյաց հանդեսի ժամանակ 41 քաղաքացիների թունավորման դեպքի մասին: Հետեւողական այդ հրապարակմանը՝ «Ազգը» կրկին խնդրեց «Նորք» ինֆեկցիոն հիվանդանոցի տնօրեն, հանրապետության գլխավոր վարակաբան Արա Ասոյանին տեղեկացնելու, թե լաբորատոր հետազոտություններից ինչ է պարզվել: Պրն Ասոյանն ասաց. «Մեր կողմից հետազոտված 41 հիվանդների մոտ հայտնաբերվել է ու մի շարք նմուշներից անջատվել է ոսկեգույն ստաֆիլակոկ եւ էնտերոպաթոգեն աղիքային ցուտիկ, ինչով եւ պայմանավորված է սննդային թունավորումը: Իսկ թե սննդամթերքի՞ց է, թե՞ ափսեողներից, թող պատասխան տան համապատասխան տեսչությունները: Այս օրվա դրությամբ ոչ մի թունավորված քաղաքացի չկա հիվանդանոցներում եւ 3-րդ օրը վերջինը դուրս է գրվել՝ ապաքինված: Բարեբախտաբար վաս հետեւանքներ չեն եղել»:

Գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության եւ անասնաբուժական պետական տեսչության պետ Գրիգա Բաղիյանը «Ազգի» հարցին, թե ի՞նչ սննդամթերքից են թունավորվել՝ ասաց. «Դում մսի, բանջարեղենի, բոլոր տեսակի սննդամթերքների մեջ ստաֆիլակոկ չի լինում: Այն լինում է կենդանի օրգանիզմում՝ կամ մարդու, կամ կենդանու: Ինչ վերաբերում է այս թունավորման դեպքին, այստեղ մարդկային գործոնն է հանդիսացել ստաֆիլակոկի ցուտիկի տարածման աղբյուրը եւ մարդուց այն անցել է սննդամթերքի եւ սպասքի միջոցով: Առաջին հերթին, երբ թունավորման դեպքը գրանցվեց, պետք է հայտնաբերել ստաֆիլակոկ պարունակող մարդուն եւ նրան հեռացնել այդ ընդհանուր միջավայրից, որպեսզի չշարունակվի վարակի տարածումը: Իսկ այդ խնդրով զբաղվում է առողջապահության նախարարության համապատասխան վարչությունը, այլ ոչ թե մեր տեսչությունը»:

«Ազգը» կապ հաստատեց ՀՀ ԱՆ պետական հիգիենիկ եւ հակահամաճարակային տեսչության սննդի հիգիենայի բաժնի պետ Մարգարիտա Բաբայանի հետ ու տեղեկացավ, որ ռեստորանից, խոհանոցից եւ շրջակա միջավայրից նմուշներ են վերցրել, որոնք էլ լաբորատոր հետազոտության են ենթարկվել: «Հայտնաբերվել է ստաֆիլակոկ՝ սննդային միջավայրից, մթերքի մշակման սեղանից, կանաչիի թասից, նույնիսկ հացի կտրատման տախտակից, մսի մշակման տախտակից, հավի աղցանում: Իսկ «Գեղամա» աղցանում հայտնաբերվել է էնտերոպաթոգեն ցուտիկ: Պարզվում է, որ ե՛ւ սննդամթերքը, ե՛ւ բանջարեղենը լավ չեն լվացվել ու մշակվել՝ առանձին-առանձին ու խախտվել է սննդամթերքի մշակման կանոնները: Այդ օրը ափսեող 11 անձանցից մեզնք նույնպես վերցրել ենք նմուշներ եւ նրանցից ոչ մեկի մոտ ինֆեկցիա չի հայտնաբերվել: Ես որպես մասնագետ պնդում եմ, որ ստաֆիլակոկը ե՛ւ բանջարեղենի, ե՛ւ սննդամթերքի, ե՛ւ կաթնեղենի մեջ կարող է լինել, եթե միկրոբների համար նպաստավոր պայմաններ առաջանան: Հնարավոր է, որ արդեն ստաֆիլակոկով վարակված կանաչին, մթերքը գնել են եւ առանձին չեն մշակել ու այդ ճանապարհով սննդամթերքի մշակման կանոնների խախտում է եղել, արդյունքում՝ մասսայական թունավորում...», ասաց տկն Բաբայանը:

Իսկ թե ինչու մասնագետները մեկը մյուսի վրա է գցում իր թերացումները, թող պարզեն իրավապահ մարմինները, մանավանդ որ ՀՀ քր. օր-ի 277 հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ: Իսկ «Գեղամա» ռեստորանի միայն մեկ խոհանոցն է փակվել: Հարկ էր, որ ռեստորանը ամբողջությամբ փակվեր, եւ տնօրենությունը հատուցեր տուժած քաղաքացիներին ե՛ւ ֆինանսապես, ե՛ւ բարոյապես:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԹԵՐԹԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հարգելի բաժանորդ,

«Պրես Ստենդ» ընկերությունը իր ընթերցողներին հնարավորություն է ընձեռում համատեղել հաճելին ու օգտակարը, խնայել ժամանակը՝ բաժանորդագրություն ձեւակերպելով մեր գործակալների միջոցով: Յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցում ցուցաբերելու համար «Պրես Ստենդ»-ի ցանց է ներմուծվում տարբեր ուղղվածության պարբերականներ՝ ժամանցային ամսագրերից մինչեւ մասնագիտական գրականության տարբեր հրատարակչություններ՝ հայկական, ռուսական եւ արտասահմանյան: Մեր տեսականին ընդգրկում է ավելի քան 1000 անուն թերթ եւ ամսագիր: Բաժանորդագրության առավելություններից մեկը կայուն գինն է, որը փոփոխման ենթակա չէ բաժանորդագրության ողջ ընթացքում: Ամսական 10000 դրամը գերազանցող բաժանորդագրության փաթեթներն առաքվում են Ձեր նշած վայրը՝ տուն կամ աշխատավայր: Այլ դեպքերում բաժանորդագրության փաթեթը կառաքվի Ձեզ համար ամենահարմար «Պրես Ստենդ»-ի կրպակ:

Բաժանորդագրություն կարող եք ձեւակերպել՝

- **Բաժանորդագրության գործակալներրի միջոցով**
- **Հեռախոսով՝ (010) 522-199**
- **Լրացնելով կտրոնը եւ թողնելով «Պրես Ստենդ»-ի ցանկացած կրպակում (ՀՀ տարածքում 279 կրպակ)**
- **Էլեկտրոնային փոստով subscribe@armpress.am**

Բաժանորդագրությունը եւ առաքումը իրականացվում է ԱՆՎՃԱՐ:

Դիելտոր <<Ֆլորես>> Աճուրդի Տուն ՍՊԸ-ն <<ԱԴԱՄԱՆԴ>> ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է <<ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՄԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ>> ՓԲԸ -ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

-Մանկապարտեզ, ընդ. մակ.՝ 3997.9 քմ, օժանդակ շինություն՝ 38.9 քմ եւ 0.6746 հա հողամաս: Հասցե՝ ՀՀ, ք. Երեւան, Էրեբունի համ., Միչուրինի փող., թիվ 36: Մեկն. գինը՝ 399750000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 27.09.2010թ-ից մինչեւ 30.12.2010թ. յուր. աշխ. օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոսը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուր. օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 25.08.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: